ԱՐՁԱԳԱՆԳ

ԿԻՊՐԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ

35-ՐԴ ՏԱՐԻ, #5-6, ՄԱՅԻՍ-ՅՈՒՆԻՍ 2016

www.artsakank.com.cy

ԱՅՍ ԹԻՒՈՎ

ՀԱՅ ԿԵԱՆՔ 1-7

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ 8-9

ՅՕԴՈՒԱԾ 10-13

Յար. Սասունեան Գէորգ Պետիկեան 10

Ասատուր Տէվլեթեան 11

Հրայր Ճէպէճեան 12

Երան Գույումճեան 13

ԿԻՊՐԱՀԱՅ 14-24

"Մայիս 28"ի հանդիսութիւն 14-15

Ֆէթհիէ Չէթին 16

25-ամեակ Շուշիի Ազատագրութեան 17

ՆԵՄԵՍԻՍ՝ Սիփան 18-19

"Կիպրան" Բանակում 21

ՀԱՅ ՊԱՏԱՆԻ 22

www.artsakank.com.cy

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ «ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵՐԿԻՐ»

«Կը խոնարհիմ ողորմութեան առջեւ Տիրոջ, որ կամեցաւ, որ Հայաստանը ըլլայ այն առաջին երկիրը, որ 301 թուականին ընդունեց քրիստոնէութիւնը իբրեւ իր կրօնը»

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանի, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ.ի եւ Կաթողիկէ եկեղեցւոյ հրաւէրով 24 Յունիսին եռօրեայ այցելութեամբ Հայաստան հասաւ Հռոմի սրբազան պապը՝ «Այցելութիւն առաջին քրիստոնեայ երկիր» կարգախօսով:

Երեւանի «Զուարթնոց» միջազգային օդակայանին մէջ Ֆրանկիսկոս պապը արժանացաւ պաշտօնական ընդունելութեան:

Զինք դիմաւորելու եկած էին նախագահ Սերժ Սարգսեանն ու առաջին տիկինը եւ Ամենայն հայոց Գարեգին Բ. կաթողիկոսը, ինչպէս նաեւ պետական պաշտօնեաներ, դիւանագէտներ, Հայ առաքելական եւ կաթողիկէ եկեղեցիներու եպիսկոպոսներ:

Օդակայանին մէջ հայկական միջնադարեան շարականներով պապը ողջունեցին «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախումբին սաները: Ազգային տարազով երեխաները Հռոմի պապին մատուցեցին հայկական ծիրան եւ լաւաշ:

⇨

ՎԱՐԴԳԷՍ ՄԱՀՏԵՍԵԱՆ ՎԵՐԸՆՏՐՈՒԵՑԱՒ

Ընդդիմադիր թեկնածուի բացակայութեան, Ներքին գործերու նախարարութեան մէջ, Ներկայացուցիչներու Տան հայ կրօնական խմբակցութեան ներկայացուցիչ հռչակուեցաւ Վարդգէս Մահտեսեանը:

Արարողութենէն ետք Պրն. Մահտեսեան յայտնեց, որ այսօրուան զարգացումէն ինք բարոյապէս բաւարարուած կը զգայ, քանի ան ցոյց կու տայ, որ հայ համայնքը դրական մօտեցում ցուցաբերած է վերջին տասը տարուան մէջ կատարուած աշխատանքին հանդէպ: Այս իրողութիւնը իրեն ուժ եւ քաջութիւն կը ներշնչէ, յաջորդ հինգ տարիներուն նոյն աշխոյժութեամբ շարունակելու իր պաշտօնավարութիւնը, ըսաւ ան:

Իսկ ինչ կը վերաբերի միւս կրօնական խմբակցութիւններուն, ընտրութիւնները տեղի ունեցան բնականոն կերպով, մարոնիտ Եաննակիս Մուսասի եւ լատին Անթոնելլա Մանթովանիի յաղթանակներով:

«ՄԱՅԻՍ 28» - 98-ԱՄԵԱԿ

Հայաստանի Ա. Հանրապետութեան 98-րդ տարեդարձը փառաշուք հանդիսութեամբ նշուեցաւ Ուր-բաթ, 27 Մայիս 2016-ին ՀՄԸՄ-ՀԵՄ-ի մարզադաշտին վրայ:

էջ 14-15

Հռոմի Պապը Վերահաստատեց Հայոց Ցեղասպանութեան Ճանաչումը

Հայաստան տուած այցելութեան ծիրին մէջ Հռոմի Ֆրանկիսկոս պապը նախագահական պալատին մէջ հանդիպում ունեցաւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի հետ, որ դիտել տուաւ, թէ Հայաստանի եւ Վատիկանի միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 25 տարիներուն ընթացքին հայ ժողովուրդին համար պատմական իրադարձութիւններ տեղի ունեցած են. «Մենք շնորհակալ ենք մեր հինաւուրց հողին եւ բազմաչարչար ժողովրդին օրհնութիւն բերելու համար», ըսաւ նախագահ Սարգսեան՝ յիշելով երկկողմանի յարաբերութիւններուն մէջ արձանագրուած յատկանշական իրադարձութիւնները:

Անկէ ետք պապը հանդիպում ունեցաւ Հայաստանի իշխանաւորներուն, Երեւանի մէջ հաւատարմագրուած դիւանագիտական կազմի ներկայացուցիչներուն եւ այլ հրաւիրեալներու հետ: Յատկանշական էր այն, որ այս առիթով արտասանած իր խօսքին մէջ Ֆրանկիսկոս պապը՝ շեղելով նախապէս լրագրողներուն տրամադրուած իր խօսքի բնագիրէն, արտասանած է ցեղասպանութիւն բառը. «Այդ ողբերգութիւնը՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ, ցաւօք, գլխաւորեց տխուր ցանկը անցեալ դարու անմարդկային աղէտներուն», ըսաւ Հռոմի պապը, թէեւ իր խօսքին մէջ այդ բառը չէր նշուած:

Հայաստանի նախագահը իւրայատուկ նկատեց պապին այցելութեան օրը՝ պատիւ սեպելով զայն հիւրընկալել «քրիստոնէութիւնը առաջինը պետականօրէն ընդունած եւ յանուն քրիստոնէական ինքնութեան ու արժէքների հազարամեայ մաքառումներով անցած հայոց հողում»: Նախագահը լուսարձակի տակ առաւ այն երեւոյթը, որ սիրոյ եւ խաղաղութեան, գթասրտութեան համամարդկային արժէքներու եւ մարդասիրական գաղափարներու նկատմամբ պապին հաւատարմութեամբ եւ հայութիւնը յուզող հարցերու նկատմամբ անոր մնայուն հոգածութեամբ Ֆրանկիսկոս պապը կը վայելէ հայ ժողովուրդին մեծ յարգանքն ու հիացմունքը:

Ֆրանկիսկոս պապը եւս այս առիթով արտասանած իր խօսքին մէջ մեծ ուրախութիւն նկատեց «յոյժ սիրելի հայկական աշխարհի հողին» վրայ գտնուիլը, այցելելը հինաւուրց եւ հարուստ աւանդութիւններ ունեցող ժողովուրդի մը, որ քաջութեամբ պահած է իր հաւատքը, որ շատ տառապած է, բայց միշտ ալ վերածնած:

« *...Մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսէ, Արեւն ամռան ու ձմեռուայ վիշապաձայն բուքը վսեմ, ... հազարամեայ քարն ... աղօթք դարձած երկաթագիր գրերը մեր* (Եղիշէ Չարենց, «Ես իմ անուշ Հայաստանի»): Ասոնք քանի մը հզօր պատկերներ են, որոնք ձեր հռչակաւոր բանաստեղծը մեզի կ՛ընծայէ՝ լուսաւորելու համար մեզ Հայաստանի պատմութեան խորութեան եւ բնութեան գեղեցկութեան մասին: Անոնք քիչ խօսքերու մէջ կ՛ամփոփեն ամբողջ ժողովուրդի մը փառաւոր եւ ողբերգական փորձառութեան արձագանգն ու խտութիւնը եւ տոգորող սէրը հայրենիքի հանդէպ», ըսաւ պապը:

Շնորհակալութիւն յայտնելով այս հրաւէրին համար, պապը դիտել տուաւ, որ 2015-ին տրուած հայկական բարձրաստիճան մակարդակի այցելութեան եւ արարողութեան ընթացքին յիշատակւեցաւ 100-ամեակը «Մեծ Եղեռնի, որ հարուածեց ձեր ժողովուրդը, եւ որ անչափ անհամար զոհեր պատճառեց: Այդ ողբերգութիւնը՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ, ցաւօք, գլխաւորեց տխուր ցանկը անցեալ դարու անմարդկային աղէտներու, որոնք գործադրուեցան ցեղապաշտական, գաղափարախօսական եւ կրօնական մոլորեցնող շարժառիթներով: Յարգանքի իմ տուրքս կը մատուցանեմ հայ ժողովուրդին, որ՝ լուսաւորուած Աւետարանի լոյսով, նոյնիսկ իր պատմութեան ամենաողբերգական պահերուն, Քրիստոսի Խաչի եւ Յարութեան մէջ գտած է կրկին վեր յառնելու ուժը եւ արժանապատուութեամբ վերսկսելու իր ուղին: Ասիկա կ՛ապացուցէ, թէ որքան խոր են քրիստոնէական հաւատքին արմատները եւ մխիթարութեան ու յոյսի ինչ անհատնում գանձ կը պահեն իրենց մէջ: Մեր աչքին առջեւ ունենալով նախորդ դարու ատելութեան, նախապաշարումի եւ տիրելու անսանձ փափաքին պատճառած աղէտաբեր հետեւանքները, ի սրտէ կը մաղթեմ, որ մարդկութիւնը ունակ ըլլայ դաս քաղելու այդ ողբերգական փորձառութիւններէն, գործելու պատասխանատուութեամբ եւ իմաստութեամբ՝ կրկին նման սարսափներու մէջ չիյնալու վտանգը կանխելու նպատակով:

Հռոմի Պապը Ծիծեռնակաբերդի Մէջ Հանդիպեցաւ Ցեղասպանութիւնը Վերապրածներու Ժառանգներուն

Շաբաթ, Յունիս 25-ին Հռոմի սրբազան քահանայապետ Ֆրանկիսկոս Պապը, ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ.-ի եւ նախագահ Սերժ Սարգսեանի հետ այցելեց Ծիծեռնակաբերդ:

Պապը յարգանքի տուրք մատուցեց Ցեղասպանութեան զոհերու յիշատակին, ծաղկեպսակ դրաւ յուշակոթողին եւ աղօթեց:

Հռոմի Պապը ՀՀ նախագահին եւ ամենայն հայոց կաթողիկոսին հետ այնուհետեւ ծաղիկներ խոնարհեց անմեղ զոհերու յիշատակը յաւերժացնող անմար կրակին մօտ, ուր հոգեւոր դասը կատարեց բարեխօսական կարգի արարողութիւն՝ հայցելով այլեւս սրբադասուած նահատակներու բարեխօսութիւնը:

Ֆրանսիս Պապը այցելեց Ծիծեռնակաբերդի յուշահամալիրի Յիշողութիւններու պուրակ, օրհնեց իր անուամբ տնկուած եղեւնին, որմէ ետք գրառում կատարեց Հայոց Ցեղասպանութեան թանգարան-հիմնարկի պատուոյ այցելուներու գիրքին մէջ:

«Այստեղ կ՛աղօթեմ՝ ցաւը սրտիս մէջ, որպէսզի այլեւս երբեք նման ողբերգութիւններ, ինչպիսին ասիկա է, չկրկնուին, որպէսզի մարդկութիւնը չմոռնայ եւ իմանայ չարութեան բարութեամբ յաղթել: Թող Աստուած պարգեւէ սիրեցեալ հայ ժողովուրդին եւ ամբողջ աշխարհին խաղաղութիւն եւ մխիթարութիւն: Աստուած պահպանէ հայ ժողովրդի յիշողութիւնը: Յիշողութիւնը կարելի չէ ոչ պղտորել, ոչ մոռնալ: Յիշողութիւնը խաղաղութեան եւ ապագայի աղբիւրն է», գրած է սրբազան քահանայապետը:

Յուշահամալիրին մէջ Պապին մօտեցած են Հայոց ցեղասպանութիւնը վերապրածներու խումբ մը ժառանգներ՝ զաւակներ եւ թոռներ, որոնց նախնիները, Մեծ Եղեռնի որբեր ըլլալով, Պիուս ԺԱ Պապի որոշումով օթեւան գտած էին պապական Կաստել Գանտոլֆօ դղեակ-ամառանոցին մէջ:

Ֆրանկիսկոս Պապը ապա, Գարեգին Կաթողիկոսի ընկերակցութեամբ ուղեւորուեցաւ Գիւմրի:

Պապը Լատինական Ծէսով Կը Պատարագէ Գիւմրիի Մէջ

Գիւմրիի Վարդանանց հրապարակի վրայ Շաբաթ օր կայացաւ Սուրբ պատարագը, զոր մատուցեց Հռոմի սրբազան քահանայապետ Ֆրանկիսկոս Պապը՝ լատինական ծէսով:

Հայաստանի երկրորդ մեծագոյն քաղաքի կեդրոնական հրապարակին վրայ հազարաւոր հաւատացեալներ, որոնցմէ շատեր արտասահմանէն եկած, ունկդրեցին սուրբ պատարագը:

Պատարագէն ետք, Պապը շփուած է հաւատացեալներուն հետ:

Երեւանի Բոլոր Եկեղեցիներու Զանգերու Ղօղանջով Սկիզբ Առաւ «Էկումենիկ» Արարողութիւնը

Երեւանի բոլոր եկեղեցիներու զանգերու ղօղանջին ներքոյ Հանրապետութեան հրապարակին վրայ կատարուեցաւ «Էկումենիկ» արարողութիւն, որուն մասնակցեցան Հայ առաքելական ու Հռոմեական եկեղեցիներու հոգեւոր առաջնորդները:

ԱՐՁԱԳԱՆԳ

Հրատարակութիւն ՀՅԴ Ազատամարտ Երիտասարդական Կեդրոնի

Խմբագիր - Դաւիթեան Արթօ

Փոխ Խմբագիր - Այնէճեան Վահան,

Աշխատակիցներ - Դաւիթեան Նարեկ, Ղազարեան Նանօր, Մանուշեան Մարինէ

Էջադրում - Դաւիթեան Արթօ

ΑΡΤΣΑΚΑΝΚ Μηνιαία Εφημερίδα
Έκδοση Αρμενικού Κέντρου Νεολαίας
Υπεύθυνος Έκδοσης - Αρτό Ταβιτιάν

P.O.Box 21171, 1503 Nicosia, Cyprus
www.artsakank.com.cy
editor@artsakank.com.cy

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ՄԻԱՑԵԱԼ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ

«Այսօր համայն հայութեան հոգեւոր կենտրոն Սուրբ Էջմիածնում, մենք՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսը եւ Ֆրանկիսկոս պապը, ընծայում ենք մեր մտքերը եւ սրտերը որպէս շնորհակալութեան տուրք Ամենակարողին՝ պայքարով քայքայուած եւ սփոփանքի ու յոյսի ծարաւով լեցուն աշխարհում շարունակելու եւ մեծացնելու հաւատի ու սիրոյ սերտ կապերը Հայոց եկեղեցու եւ կաթողիկէ եկեղեցու միջեւ՝ փրկութեան աւետարանական ուղերձի իրենց համընդհանուր վկայութեամբ:

Մենք փառաբանում ենք ամենասուրբ Երրորդութեանը՝ Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն, ընձեռելու համար մեզ հնարաւորութիւնը մէկտեղուելու աստուածաշնչական Արարատի երկրում, որը կանգուն է որպէս վկայութիւն, որ Աստուած է միշտ մեր պաշտպանութիւնն ու փրկութիւնը:

Գոհունակութեամբ ու հոգեւոր ուրախութեամբ ենք անդրադառնում, որ 2001 թուականին քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակման 1700-ամեակի առիթով Հայաստան այցելեց Ս. Յովհաննէս-Պօղոս Բ. պապը՝ որպէս հայ եւ կաթողիկէ եկեղեցիների եղբայրական ջերմ յարաբերութիւնների պատմութեան նոր էջի վկայութիւն: Մենք երախտապարտ ենք, որ շնորհն ենք ունեցել միասին լինելու Հռոմի Սուրբ Պետրոսի տաճարում, հանդիսաւոր պատարագի ժամանակ, 2015 թուականի Ապրիլի 12-ին, որտեղ մենք մեր յանձնառութիւնն արտայայտեցինք հակադարձելու բռնութեան ու անհանդուրժողականութեան ցանկացած դրսեւորումի՝ վերակոչելով այն, ինչ արդէն հաստատուել էր Յովհաննէս Պօղոս Բ.ի եւ Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից ստորագրուած համատեղ յայտարարութեան մէջ, որ «մէկուկէս միլիոն հայ քրիստոնեաների բնաջնջումն ընդհանրապէս ընկալւում է իբրեւ Ի. դարի առաջին ցեղասպանութիւն» *(միացեալ յայտարարութիւն, Գարեգին Բ. եւ Յովհաննէս-Պօղոս Բ., 27 Սեպտեմբեր 2001)*:

Փառք Բարձրեալին, որ այսօր քրիստոնէական հաւատը կենսունակ իրականութիւն է Հայաստանում, եւ հայոց եկեղեցին իր լիարժէք առաքելութիւնն է իրականացնում՝ եկեղեցիների միջեւ տիրող համագործակցութեան եղբայրական ոգով նեցուկ լինելով հաւատացեալներին՝ զօրակից, արդար եւ խաղաղ աշխարհի կերտման գործում: Ցաւօք, մենք վկաներ ենք մեր աչքերի առաջ տեղի ունեցող մի մեծ ողբերգութեան՝ անթիւ անհամար անմեղ մարդկանց սպանութիւնների, Մերձաւոր Արեւելքում եւ աշխարհի այլ ծագերում ցեղային, տնտեսական, քաղաքական եւ կրօնական հիմքերի վրայ զարգացող շարունակական բնոյթի հակամարտութիւններով թելադրուած տեղահանումների կամ պարտադրուած ցաւալի ու անորոշ աքսորների: Այդ ամէնի արդիւնքում կրօնական եւ ցեղային փոքրամասնութիւնները դարձել են հալածանքների եւ դաժան վերաբերմունքի թիրախ, այն առումով, որ սեփական կրօնական համոզմունքի համար տառապելը դարձել է ամէնօրեայ իրականութիւն:

Նահատակները պատկանում են բոլոր եկեղեցիներին եւ նրանց տառապանքը «արեան էքիւմենիզմ» է, որը անդրանցնում է քրիստոնեաների միջեւ առկայ պատմական բաժանումները՝ մեզ բոլորիս կոչելով նպաստել Քրիստոսի առաքեալների տեսանելի միասնականութեանը: Մենք, սուրբ առաքեալների՝ Պետրոսի եւ Պօղոսի, Թադէոսի եւ Բարթողիմէոսի բարեխօսութեամբ, միասնաբար աղօթում ենք, որպէսզի սրտերի փոփոխութիւն տեղի ունենայ բոլորի մէջ, նրանց, ովքեր գործում են այսպիսի յանցանքներ եւ նրանց, ովքեր իրենց դիրքի շնորհիւ կարող են կանգնեցնել բռնութիւնները: Մենք յորդորում ենք ազգերի առաջնորդներին՝ ունկնդրելու միլիոնաւոր մարդկային արարածների կոչին, ովքեր խաղաղութիւն եւ արդարութիւն են տենչում աշխարհում, ովքեր յարգանք են պահանջում իրենց աստուածատուր իրաւունքների նկատմամբ, ովքեր անյապաղ կարիք ունեն հացի, այլ ոչ թէ զէնքերի:

Ցաւօք, մենք ականատես ենք կրօնի եւ կրօնական արժէքների արմատական դրսեւորումների, որոնք կիրառւում են՝ ատելութեան, խտրականութեան ու բռնութեան տարածումն արդարացնելու համար:

Նմանատիպ յանցանքների՝ կրօնական գաղափարներով արդարացումն անընդունելի է, քանի որ «Աստուած խռովութեան Աստուածը չէ, այլ խաղաղութեան» *(Ա. Կոր. 14:33)*: Աւելի՛ն, կրօնական տարբերութիւնների հանդէպ յարգանքն անհրաժեշտ պայման է ցեղային ու կրօնական տարբեր համայնքների խաղաղ համակեցութեան համար: Եւ հէնց քրիստոնեայ լինելով է, որ մենք կոչուած ենք խաղաղութեան ու հաշտութեան ուղիներ փնտռելու եւ իրագործելու: Այս իմաստով մենք յոյսով ենք, որ Լեռնային Ղարաբաղին վերաբերող հարցերը կը գտնեն խաղաղ լուծում:

Յիշելով այն ամէնը, ինչ Յիսուս սովորեցրեց Իր աշակերտներին, երբ Նա ասաց. «Ես սոված էի, եւ դուք ինձ հաց տուեցիք, ես ծարաւ էի, եւ դուք ինձ խմելու մի բան տուեցիք, ես օտարական էի, եւ դուք ինձ ընդունեցիք, ես մերկ էի, եւ դուք ինձ հագցրեցիք, ես հիւանդ էի, դուք ինձ այցելեցիք, ես բանտում էի, եւ դուք եկաք ինձ տեսութեան» *(Մատթ. 25:35-36)*, մենք խնդրում ենք մեր եկեղեցիների հաւատացեալներին բացելու իրենց սրտերն ու ձեռքերը՝ օգնելու պատերազմի եւ ահաբեկչութեան զոհերին, փախստականներին եւ նրանց ընտանիքներին: Կարեւորւում է մեր մարդասիրութեան զգացումը, մեր զօրակցութիւնը, կարեկցանքը եւ մեծահոգութիւնը, որոնք կարող են ճիշդ արտայայտուել միայն առկայ նիւթական պաշարների անյապաղ եւ գործնական նուիրատուութեամբ:

Մենք ընդունում ենք այն, ինչն արդէն իսկ արւում է, բայց պնդում ենք, որ աւելին պէտք է արուի քաղաքական առաջնորդների եւ միջազգային կառոյցների կողմից, որպէսզի ապահովուած լինի բոլորի՝ խաղաղութեան եւ անվտանգութեան մէջ ապրելու իրաւունքը, պաշտպանուած լինի օրէնքի գերակայութիւնը, կրօնական եւ ցեղային փոքրամասնութիւնների պաշտպանութիւնը, կանխուած լինեն մարդկային շահագործումը եւ մաքսանենգութիւնը:

Հասարակութեան ստուար հատուածների աշխարհիկացումը, օտարումը հոգեւորից ու աստուածայինից, անխուսափելիօրէն յանգեցնում են մարդու եւ մարդկային ընտանիքի ապասրբացմանն ու նիւթապաշտական ընկալմանը: Այս առումով մենք մտահոգ ենք շատ երկրներում ընտանեկան կեանքի ճգնաժամով: Հայ եւ կաթողիկէ եկեղեցիներն ընտանիքի մասին նոյն ընկալումն ունեն, որը հիմնուած է ազատ կամքով ու հաւատարմութեամբ ծնուած սիրոյ արդիւնք հանդիսացող տղամարդու եւ կնոջ ամուսնութեան վրայ:

Մենք ուրախութեամբ արձանագրում ենք, որ չնայած քրիստոնեաների միջեւ առկայ բաժանումներին, այն, ինչ մեզ միաւորում է, աւելին է, քան այն, ինչ մեզ բաժանում է, որի վրայ էլ պէտք է կառուցել Քրիստոսի եկեղեցու միութիւնը, ըստ Տիրոջ խօսքի, որ բոլորը մէկ լինեն *(Յովհ. ԺԷ. 21)*: Վերջին տասնամեակներում մեր եկեղեցիների յարաբերութիւնները թեւակոխել են որակապէս նոր փուլ՝ ամրապնդուած լինելով համատեղ աղօթքներով եւ ժամանակակից մարտահրաւէրներին դիմագրաւելու միասնական ջանքերով: Մենք այսօր համոզուած ենք այս յարաբերութիւնների շարունակականութեան խիստ կարեւորութեան մէջ՝ երկուստեք առաւել խորը եւ վճռական յանձնառութեամբ ոչ միայն աստուածաբանական մարզում, այլեւ աղօթական եւ գործնական համագործակցութեամբ տեղական համայնքներում՝ լիարժէք հաղորդակցութիւն եւ միութեան յստակ արտայայտութիւններ կիսելու տեսլականով: Մենք յորդորում ենք մեր հաւատացեալներին ներդաշնակ կերպով աշխատելու հասարակութեան մէջ քրիստոնէական արժէքների զօրացման համար, որոնք արդիւնաւոր կերպով նպաստում են արդարութեան, խաղաղութեան եւ մարդկային համերաշխութեան քաղաքակրթութեան կառուցմանը: Հաշտութեան եւ եղբայրութեան ուղին բաց է մեր առաջ: Թող Սուրբ Հոգին, ով առաջնորդում է մեզ ամենայն ճշմարտութեան *(հմմտ. Յովհ. ԺԶ. 13)*, զօրացնի ամէն ազնիւ ջանք, որ ուղղուած է մեր մէջ սիրոյ եւ հաղորդութեան կամուրջների կառուցմանը:

Սուրբ Էջմիածնից մենք կոչ ենք անում մեր բոլոր հաւատացեալներին միանալու մեզ աղօթքով, Սուրբ Ներսէս Շնորհալու խօսքերով. «Փառաւորեալ Տէր, ընդունի՛ր ծառաներիդ աղաչանքները եւ ի բարին կատարիր մեր խնդրանքները՝ բարեխօսութեամբ Սուրբ Աստուածածնի, եւ Յովհաննէս Մկրտչի, եւ Սուրբ Ստեփանոս Նախավկայի, եւ մեր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի, եւ Սուրբ առաքեալների, մարգարէների, վարդապետների, մարտիրոսների, հայրապետների, ճգնաւորների, կոյսերի եւ Քո բոլոր երկնային ու երկրային սրբերի: Եւ Քեզ՝ անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ, փառք եւ երկրպագութիւն, յաւիտեանս յաւիտենից, ամէն»:

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ՍԱՐԳՍԵԱՆ – ԱԼԻԵՒ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Վիեննայի մէջ Մայիս 16-ին սկսաւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի եւ Ազրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հանդիպումը՝ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահ երկիրներու արտաքին գործոց նախարարներուն մասնակցութեամբ:

Ուշ երեկոյեան պաշտօնական աղբիւրներ հաղորդեցին, թէ Սարգսեան-Ալիեւ հանդիպումին քննարկուած են Լեռնային Ղարաբաղի տագնապի գօտիին մէջ Ապրիլ ամսուան ընթացքին զինադադարի խախտման պատճառով ստեղծուած լարուած իրավիճակը եւ անկէ դուրս գալու ուղիները:

Համանախագահող երկիրներու ներկայացուցիչները պնդած են 1994-ի 1995-ի զինադադարի ամրապնդման մասին համաձայնագիրներու անշեղ իրագործման անհրաժեշտութիւնը: Համաձայնութիւն ձեռք բերուած է քայլեր ձեռնարկելու՝ անոնց իրականացման մշտադիտարկման եւ դէպքերու հետաքննութեան մեքանիզմի ներդրման, ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցիչի խումբի կարողութիւնները աւելցնելու, տագնապի լուծման բանակցային հոլովոյթի հաւանական վերսկսման ուղղութեամբ:

Միւս կողմէ, նախագահ Սերժ Սարգսեան Վիեննայի մէջ հանդիպում ունեցած է ԵՄ արտաքին քաղաքականութեան բարձրագոյն յանձնակատար Ֆետերիքա Մոկերինիի եւ ԱՄՆ արտաքին գործոց նախարար Ճոն Քերիի հետ:

Ֆետերիքա Մոկերինիի հետ հանդիպումին ընթացքին քննարկուած են շրջանի զարգացումներուն եւ անվտանգութեան սպառնացող ներկայ մարտահրաւէրներուն վերաբերող հարցեր: Հանգամանալից կերպով անդրադարձ կատարուած է Լեռնային Ղարաբաղի տագնապի շփման գօտիին մէջ զինադադարի կոպիտ խախտման իբրեւ հետեւանք յառաջացած լարուածութեան աճին եւ ստեղծուած իրավիճակէն դուրս գալու կարելիութիւններուն:

Նախագահ Սարգսեան՝ կարեւոր նկատած է 1994-ի եւ 1995-ի զինադադարի համաձայնագիրներու անվերապահ կատարման անհրաժեշտութիւնը՝ իբրեւ տագնապի լուծման համար բարենըպաստ պայմաններու ստեղծման ծառայող առաջին քայլ:

Ֆ. Մոկերինի վերահաստատած է Եւրոպական Միութեան աջակցութիւնը ԵԱՀԿ-ի Մինսքի խըմբակի համանախագահողներու ջանքերուն եւ պատրաստակամութիւն յայտնած սատարելու տագնապի գօտիին մէջ վստահութեան ամրապընդման նախաձեռնութիւններու գործադրութեան: Այդ առումով հայկական կողմը կարեւոր նկատած է Եւրոպական Միութեան ներկայացուցիչներուն այցելութիւնները տագնապէն տուժած շրջաններ:

Հանդիպումին ընթացքին անդրադարձ կատարուած է նաեւ Հայաստան-ԵՄ երկկողմանի յարաբերութիւններու օրակարգին, որուն մէջ՝ առանձին մարզերու մէջ համագործակցութեան:

ԱՄՆ արտաքին գործոց նախարար Ճոն Քերիի հետ նախագահ Սարգսեան քննարկած է Ապրիլի սկիզբը զինադադարի կոպիտ խախտման իբրեւ հետեւանք ստեղծուած իրավիճակէն դուրս գալու կարելիութիւնները: Նախագահ Սարգսեան նշած է, որ բանակցային հոլովոյթի վերսկսման համար անհրաժեշտ է ապահովել 1994-ի զինադադարի մասին եւ 1995-ի զինադադարի ամրապնդման մասին համաձայնագիրներու լիարժէք իրականացումը, ինչպէս նաեւ զինադադարի խախտումներու հետաքննութեան մեքանիզմի շուտափոյթ ներդրումը:

Կողմերը անգամ մը եւս վերահաստատած են, որ Լեռնային Ղարաբաղի տագնապը զինուորական լուծում չունի, եւ անհրաժեշտ է հիմնարար սկզբունքներու հիման վրայ գտնել փոխադարձաբար ընդունելի լուծման մեքանիզմներ:

ՆԱԽԱԳԱՀ ՍԱՐԳՍԵԱՆ՝ ՀԱՆԴԻՊՈՒՄԻՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան Վիեննայէն Երեւան վերադառնալու ճամբուն վրայ օդանաւին մէջ իրեն ընկերակցող լրագրողներուն հետ զրուցելով խօսած է ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահող երկիրներուն նախաձեռնութեամբ Ազրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ տեղի ունեցած հանդիպումին մասին:

«Մենք պատրաստ ենք որեւէ ելքի, բայց մեր ցանկութիւնն է, որ այդ ելքը ըլլայ խաղաղ ճամբան: Մեր նպատակն է, որ մեր խնդիրները լուծենք խաղաղ ճամբով, բանակցութիւններով, բայց եթէ ազրպէյճանցիները դրժեն իրենց խոստումները, խախտեն զինադադարի պայմանները, մենք այլ ելք պիտի չունենանք, քան համարժէք պատասխանելը, իրականութիւնը այս է: Յոյսով ենք, որ խախտումները քիչ ըլլան: Ես չեմ կարծեր, որ վաղուընէ խախտումները կը բացառուին, բայց յոյս ունիմ, որ հանդարտ կ՛ըլլայ: Եթէ ազրպէյճանցիները դրժեն իրենց խոստումները, խախտեն զինադադարի պայմանները, մենք այլ ելք պիտի չունենանք, քան համարժէք պատասխանելը, իրականութիւնը այս է», շեշտած է նախագահը:

Հանդիպումը բաւարար նկատելով՝ նախագահ Սարգսեան յայտնած է, որ պէտք էր պարզաբանել, որ բանակցութիւնները արդեօք վերջնական փակուղի՞ մտած են. «Մեր նպատակն էր պարզել, թէ իրականութեան մէջ բանակցութիւնները մտա՞ծ են փակուղի եւ այլ ելք չկա՞յ, քան պատերազմիլը, թէ՞, այնուամենայնիւ, մենք կըրնանք խնդիրը լուծել քիչ կորուստներով: Ընդհանուր առմամբ, ես եւ իմ գործընկերներս բաւարարուած ենք հանդիպումին արդիւնքներով:

ՆԱԼԲԱՆԴԵԱՆ. «ՅՈՅՍՈՎ ԵՆՔ՝ ԱՅՍ ԱՆԳԱՄ ԱԶՐՊԷՅՃԱՆԸ ՉԻ ԽՈՐՏԱԿԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹԵԱՆ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԸ»

Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան 18 Մայիսին Սոֆիայի մէջ ելոյթ ունենալով Եւրոպական խորհուրդի նախարարներու կոմիտէի 126-րդ նիստին, յայտարարած է, որ Հայաստան կը կիսէ Եւրոպական խորհուրդի ընդհանուր քարտուղար Թորպիոռն Եակլանտի տեսակէտը «Ժողովրդավարական անվտանգութեան» հայեցակարգին վերաբերեալ, ըստ որուն, ժողովրդավար երկիրներու պարագային քիչ հաւանականութիւն կայ, որ պատերազմի սկսին:

«Ակնյայտ է, որ մենատիրական վարչակար-

գերը նման երկընտրանքի առջեւ չեն», ըսած է Նալբանդեան՝ ընդգծելով. «Նման իրավիճակի ականատեսը դարձանք այս տարուան Ապրիլի սկիզբը, երբ Ազրպէյճանը Լեռնային Ղարաբաղի դէմ սկսաւ լայնածաւալ զինուորական գործողութիւններ, որոնց պատճառով բազմաթիւ զոհեր եւ վիրաւորներ եղան, տեղի ունեցան միջազգային մարդասիրական իրաւունքի եւ մարդու իրաւունքներու կոպտագոյն խախտումներ»:

«Իրենց միացեալ յայտարարութեան մէջ համանախագահող երկիրները շեշտեցին 1994-1995-ի զինադադարի մասին համաձայնագիրներու անշեղ իրագործման անհրաժեշտութիւնը: Համաձայնութիւն ձեռք բերուեցաւ քայլեր ձեռնարկելու անոնց իրականացման մշտադիտարկման եւ դէպքերու հետաքննութեան մեքանիզմի ներդըրման, ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցիչի խմբակի կարողութիւններու յաւելման վերաբերեալ: Այս ամէնը կրնայ ճամբայ հարթել տագնապի լուծման բանակցային գործընթացը վերսկսելու համար», յայտնած է ան:

Իր խօսքը եզրափակելով՝ Էդուարդ Նալբանդեան ըսած է. «Մինչեւ այսօր Ազրպէյճանը շարունակաբար խափանած է ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահ երկիրներու նման առաջարկները եւ նոյնիսկ ձեռքբերուած պայմանաւորուածութիւնները: Յոյսով ենք, որ այս անգամ Ազըրպէյճանը չի խորտակեր համանախագահ երկիրներուն յոյսերը, միջազգային հանրութեան սպասելիքները»:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԻ ԼՈՒԾՈՒՄԸ ՁԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ Ս. ՓԵԹԵՐՍՊՈՒՐԿԻ ՄԷՋ

Ս. Փեթերսպուրկի Քոնսթանթինովեան պալատին մէջ Յունիս 20-ին տեղի ունեցաւ Հայաստանի, Ռուսիոյ եւ Ազրպէյճանի նախագահներ Սերժ Սարգսեանի, Վլատիմիր Փութինի եւ Իլհամ Ալիեւի եռակողմանի հանդիպումը: Սակայն նախ քան այդ, Փութին անջատ հանդիպումներ ունեցաւ Հայաստանի եւ Ազրպէյճանի նախագահներուն հետ:

Ռուսիոյ նախագահի օգնական Եուրի Ուշաքով անդրադառնալով Սարգսեան-Ալիեւ հանդիպումին յայտնեց, որ Ռուսիա պիտի փորձէ ղարաբաղեան տագնապի լուծման հարցին մէջ աշխուժօրէն աջակցիլ կողմերուն. «Մենք արդէն ունեցած ենք, կ՚ըսէի, որոշիչ դեր մարտական գործողութիւններու դադրեցման մէջ», նշեց ան:

Ռուսիոյ նախագահի բանբեր Տմիթրի Փեսքով իր կարգին յայտնեց. «Սարգսեանի եւ Ալիեւի հետ Փութինի բանակցութիւնները դիւրին պիտի չըլլան»:

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան Փութինի հետ իր հանդիպումէն առաջ` պատասխանելով լրագրողի հարցումներուն խօսեցաւ հանդիպումէն իր սպասելիքներուն մասին. «Վերջին քանի մը տարիները ցոյց տուած են, որ բանակցային հոլովոյթը քիչ թէ շատ արդիւնաւէտ կրնայ ըլլալ, եթէ կողմերը կատարեն իրենց պարտաւորութիւնները: Այսինքն, իրենց գործողութիւնները համահունչ են 1994 եւ 1995 թուականներուն կնքուած զինադադարի համաձայնագիրի կէտերուն: Վիեննայի մէջ 16 Մայիսին համանախագահներու յայտարարութիւնը եւս այդ մասին կը վկայէ: Կ՚ակնկալեմ, որ Ս. Փեթերսպուրկի մէջ մենք ի վերջոյ կը համաձայնինք եւ Ազրպէյճան պիտի կատարէ իր պարտաւորութիւնները, սահմաններու վրայ խախտումներ չեն ըլլար, եւ մենք պիտի շարունակենք բանակցային հոլովոյթը Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման լաւ նպատակով», ըսաւ ան:

ՓՈՒԹԻՆ-ՍԱՐԳՍԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ



Օրուան առաջին հանդիպումը նախագահներ Փութինի եւ Սարգսեանի միջեւ էր: Ռազմավարական գործընկեր երկու երկիրներու նախագահները քննարկած են Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման բանակցային հոլովոյթին վերաբերող հարցեր: Անոնք մտքեր փոխանակած են Վիեննայի մէջ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահող երկիրներու արտաքին գործոց նախարարներու նախաձեռնութեամբ տեղի ունեցած հանդիպումին իբրեւ արդիւնք ձեռք բերուած համաձայնութիւններու գործադրման ընթացքին շուրջ:

Հանդիպումը կայացած է դէմ առ դէմ, ապա ընդլայնուած ձեւաչափով` մասնակցութեամբ Հայաստանի եւ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարներուն:

Նախագահ Սարգսեան շնորհակալութիւն յայտնած է Փութինին` Ս. Փեթերսպուրկի մէջ այսպիսի հանդիպում կազմակերպելու նախաձեռնութեան համար, ու ըսած է. «Նախագահ Փութին, որովհետեւ այս հանդիպումը հիմնականին մէջ նուիրուած է Ղարաբաղին, ես կանգ պիտի չառնեմ երկկողմանի հարցերու օրակարգին վրայ: Բոլոր ուղղութիւններով կապերը կ՚ամրապնդուին: Իրականութեան մէջ, այստեղ խնդիրներ չկան: Մեր դիրքորոշումը Ղարաբաղի հարցին մէջ յայտնի է բոլորին: Մենք կ՚ուզենք, որ հարցը լուծուի բացառապէս խաղաղ ճամբով: Ես կ՚ուզեմ շնորհակալութիւն յայտնել ձեզի, ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահող երկիրներու միւս ղեկավարներուն այն ուշադրութեան, ջանքերուն համար, զորս դուք կը յատկացնէք այս հարցին: Սակայն, ցաւօք, մէկ կողմի ցանկութեամբ նման տագնապները ոչ մէկ ձեւով կը լուծուին: Եւ մենք, վստահաբար, շատ ուրախ պիտի ըլլայինք, եթէ այսօր կարենայինք յառաջ շարժիլ Վիեննայի մէջ ձեռք բերուած համաձայնութիւններու գործադրման ուղղութեամբ` այսինքն` զինադադարի դրութեան խախտումներու հետաքննութեան մեքանիզմներ ստեղծենք: Ատիկա աշխատանքային տրամադրութիւն պիտի ստեղծէ բանակցութիւններու կատարման համար», ըսած է նախագահ Սարգսեան:

ՍԱՐԳՍԵԱՆ – ՓՈՒԹԻՆ – ԱԼԻԵՒ ՄԻԱՑԵԱԼ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Եռակողմանի հանդիպումէն ետք նախագահներ Սերժ Սարգսեան, Վլատիմիր Փութին եւ Իլհամ Ալիեւ հանդէս եկած են միացեալ յայտարարութեամբ, որուն մէջ ըսուած է.

«Հայաստանի Հանրապետութեան, Ռուսիոյ եւ Ազրպէյճանի Հանրապետութեան նախագահները 20 Յունիս 2016-ին հանդիպեցան Ս. Փեթերսպուրկի մէջ Ռուսիոյ Նախագահին հրաւէրով եւ քննարկեցին Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման վերաբերող հարցեր:

«Հայաստանի Հանրապետութեան եւ Ազրպէյճանի Հանրապետութեան նախագահները վերահաստատեցին 16 Մայիսին Վիեննայի մէջ տեղի ունեցած հայ-ազրպէյճանական վեհաժողովի պայմանաւորուածութիւնները` ուղղուած տագնապի գօտիին մէջ իրավիճակի կայունացման եւ խաղաղ հոլովոյթի յառաջընթացին նպաստող մթնոլորտի ստեղծման: Այդ նպատակով անոնք համաձայնեցան մասնաւորապէս բազմացնել տագնապի գօտիին մէջ միջազգային դիտորդներու թիւը: Անոնք գոհունակութիւն յայտնեցին վերջին շրջանին շփման գիծին մէջ զինադադարի դրութեան պահպանման առնչութեամբ: Կատարւեցաւ տագնապի խաղաղ լուծման առանցքային/բովանդակային հարցերու շուրջ մտքերու հանգամանալից փոխանակում:

«Պետութիւններու ղեկավարները փաստեցին շարք մը հարցերու առնչութեամբ փոխըմբռնման հասնելու հանգամանքը, որոնց լուծումը կարելիութիւն կ՚ընձեռէ պայմաններ ստեղծելու յառաջընթաց արձանագրելու Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման հարցին մէջ: Նախագահները նշեցին իրենց կանոնաւոր շփումներու կարեւոր նշանակութիւնը եւ պայմանաւորուեցան շարունակել զանոնք նման ձեւաչափով ի յաւելումն ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներու աշխատանքին, որոնք հրաւիրուած էին Ս. Փեթերսպուրկի մէջ տեղի ունեցած հանդիպումի աւարտին»:

«Ս. ՓԵԹԵՐՍՊՈՒՐԿԻ ՄԷՋ ՔԱՅԼԵՐ ԱՌՆՈՒԱԾ ԵՆ ԱՐՑԱԽԻ ՄԷՋ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ» Կ՚ԸՍԷ ՈՒՈՐԼԻՔ

«Առաջին լրատուական» կը հաղորդէ, որ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի ամերիկացի համանախագահ Ճէյմս Ուորլիք ղարաբաղեան տագնապի լուծման մասին գրառում մը կատարած է «Թուիթըր»-ի վրայ` նշելով, որ Ս. Փեթերսպուրկի մէջ տեղի ունեցած Հայաստանի, Ազրպէյճանի եւ Ռուսիոյ նախագահներու հանդիպման ընթացքին կողմերը քայլերու նախաձեռնած են` Արցախի մէջ խաղաղութիւն հաստատելու ուղղութեամբ:

«Մենք պէտք է աշխատինք բանակցութիւններու հիման վրայ Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման ուղղութեամբ», գրած է համանախագահը:

ՖՐԱՆՍԱ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԷ ՍԱՐԳՍԵԱՆ – ԱԼԻԵՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ

Ֆրանսա` իբրեւ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահ երկիր, պատրաստակամութիւն յայտնած է Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման նպատակով` Հայաստանի եւ Ազրպէյճանի նախագահներուն միջեւ հանդիպում մը կազմակերպելու:

Պաքուի մէջ Ֆրանսայի դեսպան Օրելիա Պուշէ այս մասին ըսած է, որ «ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահները պիտի շարունակեն իրականացնել իրենց պարտականութիւնները եւ ջանքեր գործադրել փոխադարձ վստահութեան ամրապնդման ու տագնապի խաղաղ լուծման ուղղութեամբ», միաժամանակ Սարգսեան-Ալիեւ հանդիպում մը կազմակերպելու պատրաստակամութիւն յայտնելով:

Ան նաեւ ողջունած է 20 Յունիսի եռակողմ հանդիպումը. «Տագնապի խաղաղ լուծման կարելի է հասնիլ շարունակական եւ անկեղծ երկխօսութեան միջոցով», եզրակացուցած է Պուշէ:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՊՈՒՆՏԵՍԹԱԿԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԲԱՆԱՁԵՒԸ

Գերմանիոյ Պունտեսթակը 2 Յունիսին ընդունեց Հայոց ցեղասպանութեան ճանաչման բանաձեւը, որ ունի «1915 թ. հայերու եւ միւս քրիստոնեայ փոքրամասնութիւններու ցեղասպանութեան յիշատակի եւ ոգեկոչման մասին» անուանումը: Բանաձեւը ընդունուեցաւ՝ ունենալով ընդամենը մէկ դէմ եւ մէկ ձեռնպահ ձայն:

Ելոյթ ունեցողները միաձայն ընդգծեցին անցեալին հետ առերեսման անհրաժեշտութիւնը, նաեւ՝ Հայաստանի եւ Թուրքիոյ հաշտեցման գործընթացին նպաստելու մղումները:

Պունտեսթակին մէջ բարձրաձայնուեցաւ Օսմանեան Թուրքիոյ ոճրագործութեան մասին՝ նշելով, որ Գերմանիոյ քայլը ոչ թէ հայց է եւ մեղադրանք, այլ խոնարհում զոհերի յիշատակի առջեւ:

Պունտեսթակի նախագահ Նորպըրթ Լամերթը յայտարարեց խիզախութեան դրսեւորման եւ անցեալի մութ էջերուն հետ առերեսուելու անհրաժեշտութեան մասին. «Անցեալի հետ առերեսումը մեզի համար կրնայ ցաւոտ ըլլալ, սակայն միեւնոյն ժամանակ կրնայ ըլլալ ազնիւ եւ ինքնաքննադատական մօտեցում սեփական անցեալի նկատմամբ: Այդ կարեւոր է այլ պետութիւններու հետ յարաբերութիւններու կառուցման տեսանկիւնէն, որու համար պէտք է խիզախութիւն, փոխըմբռնման եւ հաշտեցման հասնելու համար», ըսաւ Լամերթ:

Բանաձեւը համատեղ կազմած եւ ներկայացուցած են իշխող կոալիցիայի մաս կազմող Քրիստոնեայ-դեմոկրատական միութիւն (CDU) եւ Քրիստոնէական-սոցիալական միութիւն (CSU), Սոցիալ-դեմոկրատական (SDP) եւ ընդդիմադիր Կանաչներու կուսակցութիւնները:

«ԹՈՒՐՔԻԱ Ի՞ՆՔ ՊԻՏԻ ՎՆԱՍԷ, ԵԹԷ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՀԵՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԻՋԵՑՆԷ» Կ՛ԸՍԷ ԿԻՐՈ ՄԱՆՈՅԵԱՆ

ՀՅԴ Բիւրոյի անդամ, Հայ դատի եւ քաղաքական հարցերու գրասենեակի պատասխանատու Կիրօ Մանոյեան՝ անդրադառնալով Գերմանիոյ խորհրդարանին կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման, հաստատած է, որ 2 Յունիսը իսկապէս շատ կարեւոր օր էր:

«Գերմանիոյ նման ազդեցիկ եւրոպական պետութիւն մըն է այսպիսի որոշում տուողը, թէեւ Գերմանիոյ նախագահը տակաւին նախորդ տարի խօսած էր այդ մասին ու ըսած, որ եղածը Ցեղասպանութիւն է: Թուրքիան ամէն ճիգ ու ջանք գործադրեց, որ նման որոշում չտրուի, սակայն, Գերմանիոյ խորհրդարանը համարեայ միաձայնութեամբ որոշեց որդեգրել այդ բանաձեւը», ըսած է Մանոյեան:

Մանոյեանի համաձայն, այդ բանաձեւին մէջ կան շարք մը կարեւոր շեշտադրումներ. «Կը խօսի Թուրքիոյ այսօրուան սերունդի պատասխանատուութեան մասին եւ ակնարկութիւն կը կատարուի այն մասին, որ այսօրուան Թուրքիան ալ պատասխանատուութեան բաժին ունի: Անդրադարձ կայ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններուն, եւ Գերմանիան յանձն կ՛առնէ այդ ուղղութեամբ աշխատանք տանիլ եւ իր կառավարութեան յանձնարարած է քայլերու ձեռնարկել», դիտել տուած է Մանոյեան:

Կիրօ Մանոյեանի բնորոշումով, Թուրքիոյ հակազդեցութիւնը խուճապահար կեցուածք ունեցողի հակազդեցութիւն է. «Դեսպանը տուն կանչուեցաւ: Թրքական մամուլը նոյնպէս խուճապի մէջ է, գերմաներէն վերնագիրներով նիւթեր կը հրապարակեն այն մասին, թէ Հիթլերի թոռներ զիրենք կը մեղադրեն Ցեղասպանութիւն գործած ըլլալու յանցանքով»:

Ըստ ՀՅԴ Բիւրոյի Հայ դատի եւ քաղաքական հարցերու գրասենեակի պատասխանատուին, ասիկա հիմնականին մէջ պատգամ է ուղղուած Թուրքիոյ, սակայն այդ երկրի պահուածքը անփոփոխ է. «Թուրքիան կը կրկնէ, որ Հայաստանի հետ յարաբերութիւնները պիտի չբարելաւուին, այնքան ատեն որ Ղարաբաղի հարցը առկայ է: Կարելի չէ Թուրքիոյ կողմէ որեւէ դրական բան ակնկալել», ըսած է ան:

Պատասխանելով այն հարցումին, թէ կրնա՞յ ըլլալ, որ Պունտեսթակի կողմէ ընդունուած բանաձեւին յաջորդէ ժխտումը քրէականացնող բանաձեւի ընդունումը, Մանոյեան ըսած է, թէ Գերմանիոյ կողմէ նման նախաձեռնութիւն ակնկալելէ առաջ պէտք է սպասենք, թէ Ֆրանսայի մէջ ի՛նչ պիտի ըլլայ: Ան աւելցուցած է, որ եթէ Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ բանաձեւը մնար Գերմանիոյ կառավարութեան որոշումէն կախեալ, այդպէս ալ կը մնար:

Անդրադառնալով Գերմանիա-Թուրքիա յարաբերութիւններուն՝ Կիրօ Մանոյեան նշած է. «Ինչպէս բոլոր նման բանաձեւերու պարագային, Թուրքիան ինչ ալ ընէ, որքան ալ նեղանայ, այդ յարաբերութիւնները կը շարունակուին այնպէս, ինչպէս կան: Եթէ Թուրքիան յարաբերութիւններուն մակարդակը իջեցնէ, այդ պիտի նշանակէ, որ իր շահերուն կը հարուածէ ու կը վնասէ»:

ԱՄՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՎԻՐՃԻՆԻԱ ՆԱՀԱՆԳԸ ՃԱՆՉՑԱՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը կը հաղորդէ, որ Արեւմտեան Վըրճինիան դարձած է Միացեալ Նահանգներու 44-րդ նահանգը, որ պաշտօնապէս ճանչցած է Հայոց ցեղասպանութիւնը:

Նահանգապետ Ըրլ Ռէյ Թոմպլի յատուկ յայտարարութեամբ ապրիլ ամիսը հռչակած է «Ցեղասպանութիւններու մասին իրազեկման եւ կանխարգիլման ամիս»: Ան յայտարարած է, որ այդպիսի որոշում տրուած է ի յիշատակ Հայոց ցեղասպանութեան, Ողջակիզումի եւ այլ ցեղասպանութիւններու զոհերու եւ յանուն վերապրածներու:

Նահանգապետը հիմնաւորած է, որ Հայոց ցեղասպանութեան, Ողջակիզումի եւ այլ այդպիսի դէպքերու ճանաչումով կը պաշտպանուի պատմութիւնը եւ կը կանխարգիլուի այսուհետեւ այդպիսի վայրագութիւններու կրկնութիւնը:

Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը իր հաղորդագրութեան մէջ ողջունելով նահանգային իշխանութիւններու որոշումը, կ՛արձանագրէ, որ աւելի դիւրին է թուարկել Հայոց ցեղասպանութիւնը առայժմ չճանչցած նահանգներուն անունները, քան՝ հակառակը:

Միացեալ Նահանգներու 50 նահանգներէն արդէն 44-ը ճանչցած են եւ դատապարտած Հայոց ցեղասպանութիւնը:

ԱՐԺԱՆԹԻՆԻ ԷՆԹՐԷ ՌԻՈՍ ՆԱՀԱՆԳԸ ՃԱՆՉՑԱԾ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Արժանթինի Էնտրէ Ռիոս նահանգը հաստատած է օրէնք մը, որ Արժանթինի մէջ Հայոց ցեղասպանութեան օրը կը սահմանէ իբրեւ «Հանդուրժողականութեան եւ ժողովուրդներու միջեւ յարգանքի օր»:

Ըստ «Փրենսա Արմենիա» լրատու գործակալութեան, 31 Մայիսին տեղի ունեցած է նաեւ Էնթրէ Ռիոսի նահանգապետի տեղակալ, նահանգի ծերակոյտի նախագահ Ատան Ումպերթոյի, ծերակուտական Լուքաս Լարաթէի, Ծերակոյտի իրաւական հարցերու յանձնախումբի ղեկավարի հանդիպումը Հարաւային Ամերիկայի Հայ դատի յանձնախումբի անդամներ Նիքոլա Սապունճեանի եւ Ճորճ Տոլմաճեանի հետ:

Պուէնոս Այրեսի մէջ Հայ դատի յանձնախումբի ատենապետ Նիքոլա Սապունճեան նշած է, որ Արժանթինի կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման օրէնքին որդեգրումէն տասը տարի ետք կարեւոր է, որ Ծերակոյտը նոյնպէս միացած է այդ ուղիին, որ Արժանթինը բռնած է, դառնալով Հայոց ցեղասպանութեան ճանաչման պայքարի յառաջամարտիկներէն:

«ԹՈՂ ՈՉ ՈՔ ԿԱՍԿԱԾԻ՝ ՄԵՆՔ ՎՍՏԱՀ ՔԱՅԼԵՐՈՎ ՊԻՏԻ ՀԱՍՆԻՆՔ ՄԵՐ ԲՈԼՈՐ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ» ՇԵՇՏԵՑ ՆԱԽԱԳԱՀ ՍԱՐԳՍԵԱՆ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան 4 Մայիսին հանդիպում ունեցած է Հանրային խորհուրդի անդամներուն հետ: Ան պատասխանած է իրեն ուղղուած բազմաբնոյթ հարցումներուն, լսած է ներկայացուած առաջարկներն ու կարծիքները՝ հասարակութիւնը հետաքրքրող եւ մտահոգող շարք մը հարցերու վերաբերեալ, ներկայացուցած է իր մօտեցումները:

Նախագահին ուղղուած հարցումները կը վերաբերէին Ապրիլի սկիզբը Լեռնային Ղարաբաղի տագնապի շփման գիծին վրայ տեղի ունեցած իրադարձութիւններուն, այդ օրերուն հայկական բանակի գործողութիւններուն, Հայաստան-Արցախ-սփիւռք համախմբուածութեան, ինչպէս նաեւ Հայաստանի արտաքին եւ ներքին քաղաքականութեան, Լեռնային Ղարաբաղի տագնապի բանակցային հոլովոյթի հեռանկարին, համահայկական ներուժի համախմբման:

Հանդիպումին մասնակիցները համակարծիք եղած են այն մասին, որ համազգային, համապետական խնդիրներու շուրջ միասնականութիւնը, համախմբուածութիւնը պէտք է մնայուն ըլլայ, անհրաժեշտ է, որ իւրաքանչիւրը իր տեղին, իր մասնագիտութեան համաձայն արդիւնաւէտօրէն գործելու առաւելագոյն ջանք ներդրէ՝ այդպիսով օգտակար ըլլալով ընդհանուր յաջողութեան:

Քննարկուած են այդ տեսանկիւնէն պետութեան ակնկալիքները գիտական, հասարակական-քաղաքական շրջանակներէ, ինչպէս նաեւ Հանրային խորհուրդէն՝ առկայ ներուժը լիարժէքօրէն օգտագործելու համար:

«Թող ոչ ոք կասկածի՝ մենք վստահ քայլերով պիտի հասնինք մեր բոլոր նպատակներու իրականացման: Ապրիլի սկիզբը մենք յաղթեցինք, յաղթեցինք մեր միասնական կամքին ու մեր հաւատքին շնորհիւ: Մեր յաղթանակները պիտի շարունակուին, պիտի շարունակուին բոլոր մարզերուն մէջ: Այսօր ձեզմէ՝ Հանրային խորհուրդի անդամներէն կ՛ակնկալեմ ձեր մասնաբաժին աջակցութիւնը մեր հետագայ յաղթանակներու ապահովման գործին մէջ: Մենք նախ եւ առաջ մեր հանրութեան մէջ պէտք է վառ պահենք յաղթանակի բերկրանքը, հաւատքը սեփական ուժերուն նկատմամբ, մեզմէ իւրաքանչիւրը պէտք է դառնայ միասնութեան քարոզիչ, միաւորող առաջնորդ: Երբ մենք միասին ենք ու վստահ մեր ուժերուն, ոչ ոք կրնայ մեզ վնասել: Իսկ մենք այսօր միասին ենք ու վստահ մեր ուժերուն: Ուրեմն՝ մեր հրապարակային գործունէութեամբ, մեր խօսքով ու գործով ընենք այնպէս, որ վաղն ալ նոյն եռանդով միասնական ու վստահ ըլլանք: Ահա, թէ ի՛նչ օժանդակութիւն կ՛ակնկալեմ ձեզմէ», ըսած է նախագահ Սերժ Սարգսեան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՐԱՍՏ Է ՊԱՏԵՐԱԶՄԻ

Հայաստանի կառավարութեան Մայիս 5-ի նիստէն ետք տնտեսութեան նախարար Արծուիկ Մինասեան լրագրողներու հետ ունեցած զրոյցին ընթացքին անդրադարձաւ պատերազմական շրջանին երկրի տնտեսութեան վիճակին ու հարկային քաղաքականութեան:

Ըստ նախարարին՝ հարկային մարմինը արդիւնաւէտ կերպով աշխատած է հարկերու հաւաքագրման գծով:

«Ադրբեջանական ագրեսիան, որի նպատակն էր, ի վերջոյ, նաեւ հարուած հասցնել մեր տընտեսական իրողութիւններին, լիովին ձախողուել է, եւ դրա ապացոյցներից մէկն էլ հարկային քաղաքականութեան, զբօսաշրջութեան ոլորտում արձանագրուած ցուցանիշներն են: Ադրեջանական ագրեսիան իր նպատակին չի հասել նաեւ տնտեսութեան մասով», ըսած է Արծուիկ Մինասեան:

Անդրադառնալով հակամենաշնորհային քաղաքականութեան՝ նախարարը ըսած է, որ պէտք է սկսիլ օրէնսդրութենէն, օրէնսդրական վերանայումներէն, ինչ որ, ոչ թէ 1 կամ 2 ամսուան գործ է, այլ քաղաքականութիւն, որ պէտք է որդեգրուի ու, սահմանադրական փոփոխութիւններու լոյսին տակ, կեանքի կոչուի: Կան նաեւ միջնորդութիւններ՝ ապահովել հաւասար մրցակցային պայմաններ, զորս կառավարութիւնը կ՛ապահովէ ներկայ օրէնսդրութեամբ պայմանաւորուած:

Պատասխանելով լրագրողի մը հարցումին, թէ այսօր Հայաստանի տնտեսութիւնը պատրա՞ստ է պատերազմի՝ նախարարը ըսած է. «Այո՛, կարծ կ՛ասեմ՝ պատրաստ է»:

Լրագրողները Արծուիկ Մինասեանին հարցուցած են, թէ ի՛նչ հանգրուանի հասած է ապրիլեան ռազմական հակամարտութեան ընթացքին զոհուածներուն ընտանիքներու անդամներուն երկարաժամկէտ կայուն եկամուտ ապահովելու հարցը: Ան պատասխանած է, որ նախագիծը կը գտնուի կառավարութեան ներքին շրջանառութեան մէջ. «Կարծում եմ, որ 10 օրուայ ընթացքում այդ քննարկումների արդիւնքները կ՛ամփոփենք, կը հրապարակենք նախագիծը նաեւ ի տես բոլորի, եւ կը սկսենք աշխատանքները», ըսած է նախարարը՝ աւելցնելով, որ այդ նախագիծը իրականութիւն դարձնելը կ՛ենթադրէ բարդ ու քրտնաջան աշխատանք՝ ներգրաւելով նաեւ պաշտպանութեան, աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարութիւնները, տարածքային ստորաբաժանումներու ընկերային ծառայութիւները եւ այլն:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ՀՅԴ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալպանտեան 7 Մայիս 2016-ին հանդիպում մը ունեցաւ ՀՅԴ Հայ դատի կեդրոնական խորհուրդի ղեկավար Յակոբ Տէր Խաչատուրեանի գլխաւորած՝ կեդրոնական խորհուրդի եւ շրջանային յանձնախումբերու եւ գրասենեակներու ներկայացուցիչներուն հետ, որոնք յատուկ այս առիթով Երեւան եկած են:

Հանդիպումին կը մասնակցէին Հայաստանի արտաքին գործոց նախարարի տեղակալներն ու գլխաւոր քարտուղարը, ՀՅԴ Բիւրոյի եւ Հայաստանի Գերագոյն մարմնի անդամներ:

Նախարար Նալպանտեան ներկայացուց Արցախի դէմ Ազրպէյճանի սանձազերծած լայնածաւալ ռազմական գործողութիւնները եւ անոնց հետեւանքներուն յաղթահարման ուղղուած ջանքերը: Ապա ան պատասխանեց ներկաներու բազմաթիւ հարցումներուն:

Անդրադառնալով բանակցային գործընթացի հեռանկարներուն՝ Հայաստանի արտաքին գործոց նախարարը ըսաւ. «Այս պահուն հաւանական հանդիպումները կրնան ուղղուիլ ապրիլի սկիզբին Արցախի դէմ Ազրպէյճանի յարձակման կրկնութեան բացառման, ղարաբաղեան հակամարտութեան գօտիին մէջ 1994-1995 թուականի զինադադարի հաստատման եւ ամրապնդման վերաբերեալ եռակողմանի անժամկէտ համաձայնագրութեանց անվերապահ կատարման նպատակով համապատասխան մեքանիզմներու, միջոցառումներու ստեղծման, զինադադարի խախտումներուն հետաքննութեան մեքանիզմի ներդըրման զուգահեռ: Այդ քայլերը համապատասխան պայմաններ կը ստեղծեն բանակցային գործընթացը շարունակելու համար»:

Անդրադարձ կատարուեցաւ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ դատապարտման, հայրենիքի տնտեսական զարգացման աջակցութեան, ինչպէս նաեւ՝ համահայկական օրակարգի այլ հարցերու: Այս առիթով քննարկուեցան նաեւ Միջին Արեւելքի իրավիճակը, սուրիական ճգնաժամը եւ շրջանային այլ խնդիրներ:

ՀՅԴ ՀԱՅ ԴԱՏԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԱՐՑԱԽԻ ՄԷՋ

Մայիս 9-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Ազգային ժողովի նիստերու դահլիճին մէջ տեղի ունեցաւ ՀՅԴ Հայ դատի յանձնախումբերու եւ գրասենեակներու խորհրդաժողովի երկրորդ նիստը, զոր վարեց ՀՅԴ Արցախի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, Ազգային ժողովի «Դաշնակցութիւն» խմբակցութեան ղեկավար Դաւիթ Իշխանեան:

Նիստին սկիզբը ներկաները մէկ վայրկեան լռութեամբ յարգեցին ապրիլեան պատերազմի նահատակներուն յիշատակը:

Ողջունելով ներկաները՝ Դաւիթ Իշխանեան նշեց, որ, ինչպէս 25 տարի առաջ, այնպէս ալ ապրիլեան պատերազմին յաջորդող այս օրերուն, հայութեան ներուժը կեդրոնացաւ Արցախին մէջ՝ ծառայելով Արցախի ժողովուրդին բովանդակ շահերուն:

«Այս օրերուն Երեւանի մէջ սկսած Հայ դատի կեդրոնական եւ շրջանային գրասենեակներու եւ յանձնախումբերու խորհրդաժողովին հիմնական մասը Արցախի մէջ կատարելը իր մէջ կ՛ամփոփէ մեծ պատգամ: Ինչպէս եւ նախորդ տասնամեակներուն, այսօր եւս մենք այստեղ ենք միասին ու միասնական, համոզուած ու հաստատակամ մեր գաղափարներուն եւ ծրագիրներուն, պատրաստակամ՝ դիմագրաւելու ամէն տեսակի մարտահըրաւէրները», ըսաւ Դաւիթ Իշխանեան՝ աւելցընելով. «Մեր գիտակցումը այն է, որ Հայ դատի ուղղութեամբ տարուող աշխատանքներուն յաջողութիւններու բանալին կը գտնուի Արցախի սահմաններուն մէջ եւ ամփոփուած է հայ զինուորի ոգիին մէջ»: ❑

Հայաստանի Տնտեսութեան Նախարար

ԱՐԾՈՒԻԿ ՄԻՆԱՍԵԱՆԻ ՀԵՏ

«Ես Այսօր Հպարտօրէն Կրում Եմ Հայկական Առաջին «Արմֆոն»-ը, Որ Կրում Է Մեր Այբուբենի Առաջին Տառը»

Կը ներկայացնենք Հայաստանի տնտեսութեան նախարար ԱՐԾՈՒԻԿ ՄԻՆԱՍԵԱՆԻ հետ ՆԱՆԷ ԱՒԱԳԵԱՆԻ բացառիկ հարցազրոյցը՝ Հայաստանի տնտեսութեան առաջնայնութիւններու, գործարարներու համար ստեղծուած նոր հնարաւորութիւններու, ներդրումային քաղաքականութեան, մենաշընորհներու եւ փտածութեան դէմ իրականացուող պայքարի եւ Հայաստանի հզօրացման հարցին մէջ սփիւռքի աջակցութեան անհրաժեշտութեան մասին:

ՆԱՆԷ ԱՒԱԳԵԱՆ - Պարո՛ն նախարար, Միացեալ Նահանգներ ձեր այցի ընթացքում Լոս Անճելըսում հանդիպեցիք նաեւ ամերիկահայ գործարարների, կազմակերպութիւնների ու միութիւնների ղեկավարների ու ներկայացուցիչների հետ: Ո՞րն էր ձեր ուղերձը մեր համայնքին:

ԱՐԾՈՒԻԿ ՄԻՆԱՍԵԱՆ - Նախ՝ ողջունում եմ մեր հայրենակիցներին, ովքեր ապրում եւ գործունէութիւն են ծաւալում Միացեալ Նահանգներում: Հանդիպումների հիմնական նպատակներից է վերականգնել վստահութիւնը Հայաստանում իրականացուող քաղաքականութեան նկատմամբ եւ ակնկալել, որ մեր հայրենակիցները ներդրումներ կատարեն տնտեսութիւնը ոտքի կանգնեցնելու ուղղութեամբ: Սա շատ կարեւոր է, որովհետեւ՝ նախ Հայաստանի անվտանգութեան բանալին տնտեսութեան զարգացման մէջ է, եւ հակառակը՝ տնտեսութեան զարգացման բանալին անվտանգութեան մակարդակի բարձրացման մէջ է: Հետեւաբար, այդ տեսակէտից, սկզբունքային նշանակութիւն ունեն մեր այս համայնքային հանդիպումները: Մեր նպատակն էր ներկայացնել Հայաստանում ստեղծըւած իրավիճակը, իրականացուող փոփոխութիւնների դրական ընթացքը, սահմանադրական հանրաքուէի արդիւնքով պայմանաւորուած նոր մօտեցումները, այդ թւում նաեւ՝ Հայաստանի նախագահի կողմից բարձրաձայնուած յստակ կամքը երկրում տնտեսական, իրաւական բարեփոխումներ իրականացնելու ուղղութեամբ, եւ երկրորդը՝ որոշակի ծրագրերը, որոնք ամրագրուած են նաեւ Դաշնակցութեան եւ Հանրապետական կուսակցութեան միջեւ կնքուած համաձայնագրով: Իսկ այդ համաձայնագրով մի քանի հիմնական ուղղութիւններ կան, որոնք որպէս հիմնական ուղեգիծ՝ պէտք է տարուեն երկրի իշխանութիւնների կողմից:

Որո՞նք են այդ ուղղութիւնները:

Դրանցից առաջինը մրցունակ տնտեսութեան ձեւաւորումն է, ինչը նշանակում է, որ Հայաստանի տնտեսութեան այն հիմնական հատուածները, որոնց գործադրմամբ կարող ենք ունենալ մրցունակ վիճակ, ողջ աշխարհում առաւել ամբողջական առաջ ենք մղելու: Խօսքը վերաբերում է թէ՛ արդիւնաբերական քաղաքականութեանը, թէ՛ տեղեկատուական արհեստագիտութիւնների ոլորտում իրականացուող հիմնարար վերանայումներին, թէ՛ զբօսաշրջութեան ոլորտին: Միաժամանակ երկրում իրականացւում են վերահըսկողութեան համակարգի փոփոխութիւններ:

Երկրորդ կարեւոր փոփոխութիւնն իրաւականն է կամ որ նոյնն է՝ արդարութեան նկատմամբ հանրային ընկալման աստիճանի բարձրացումը եւ իրական գործողութիւնները: Սա առաջին հերթին օրէնքի միատեսակ կիրառութեան ապահովումն է բոլորի նկատմամբ: Օրէնքի միատեսակ կիրառութիւն՝ նշանակում է առաջին հերթին տնտեսական հաւասար պայմանների ապահովում բոլորի նկատմամբ, եթէ, օրինակ, հարկային քաղաքականութիւն է կիրառւում, բացառութիւններ չլինեն, եթէ այդ բացառութիւնները օրէնքով նախատեսուած չեն: Այլ կերպ ասած՝ անձնական կամ խմբային արդարադա-

տութիւնից անցում օրէնքի արդարադատութեանը: Սա սկզբունքային հարց է մեզ համար: Երրորդ կարեւոր ուղղութիւնը դա հանրութեան շըրջանում իրական հնարաւորութեան իրացման մեքանիզմի ստեղծումն է, այսինքն իւրաքանչիւր կարող, ունակ անձ, պէտք է ունենայ հնարաւորութիւն դրսեւորուելու որպէս հասարակութեան լիարժէք անդամ:

Սրանք ուղերձներ են, որ հնչեցրեց հանրապետութեան նախագահը, եւ դրանք հիմնուած են սահմանադրական փոփոխութիւնների վրայ եւ երկու կուսակցութիւնների միջեւ կնքուած համաձայնագրի վրայ:

Ձեր գլխաւորած պատուիրակութիւնը Սիլիքոնեան Հովտում մասնակցեց ամէնամեայ «Արմթեք» համաժողովին, որ այս տարի կրում էր «Հայաստան. ՏՏ ֆորում» խորագիրը: Կարո՞ղ ենք արդէն խօսել արդիւնքների մասին:

Մենք ունենք յստակ ձեռքբերում. Հայաստանը յայտնի է տեղեկատուական արհեստագիտութիւնների համաշխարհային քարտէզի վրայ՝ որպէս բանիմաց, կրթուած, ունակ մարդկանց երկիր՝ նորարարական ոլորտներում արդիւնքներ արձանագրած երկիր: Ակնկալում ենք, որ միջազգային շատ կազմակերպութիւններ գրասենեակներ կը բացեն Հայաստանում, ոչ միայն թեքնիք լուծումներ տալու, այլ առաջին հերթին ճարտարագիտական միտքը զարգացնելու նպատակով: Պայմանաւորուածութիւններ կան, եւ առաջիկայ ամիսներին սպասւում է որոշակի պատուիրակութիւնների այց Հայաստան՝ այս հարցերը տեղում քննարկելու եւ տեղում լուծում տալու ուղղութեամբ: Այս ամէնն առաւել կարեւորւում է Հայաստանի կառավարութեան նոր նախաձեռնութեան՝ «Ճարտարագիտական քաղաք» ծրագրի խորապատկերին, որի էութիւնը շուրջ 40-50 ժամանակակից ՏՏ եւ բարձր արհեստագիտութիւնների ոլորտի ձեռնարկութիւնների մուտքն է մեր երկիր, եւ դրանով իսկ նաեւ՝ հայաստանեան Սիլիքոնեան Հովտի ստեղծումը: Պայմանաւորուածութիւններ ունենք Այ.Պի.Էմ., «Ինթել» յայտնի կազմակերպութիւնների եւ մի շարք այլ միջազգային կառոյցների հետ՝ ներառեալ Yahoo որոնողական կայքը:

Սրանք որոշակի գործողութիւններ են, որ իրականացուելու են առաջիկայում, եւ դրան գումարենք նաեւ այն, որ արհեստագիտական փոփոխութիւնների առումով նաեւ նախընտրութիւններ կան Հայաստանում՝ նոր ձեռնարկութիւններ հիմնադրելու տեսակէտից: Հայաստանն այսօր իրական հնարաւորութիւն է միջազգային խոշոր կազմակերպութիւնների համար, եւ դա ակնյայտ է: Անդամակցելով Եւրասիական տնտեսական միութեանը՝ Հայաստանը չի փակուել այլ երկրների համար: Հակառակը, այսօր մենք ունենք արտաքին առեւտրի արդիւնաւէտ համակարգ Միացեալ Նահանգների հետ՝ «Ճի.Էս.Փի.» համակարգը, Եւրոմիութեան հետ՝ «Ճի. Էս.Փի.» Փլիւս համակարգը, Քանատայի, Զուիցերիայի, Նորվեկիայի եւ Ճափոնի հետ նոյնպէս «Ճի. Էս.Փի.» համակարգը, ինչը նշանակում է, որ հայկական հազարաւոր ապրանքներ կարող են արտօնեալ պայմաններով ներմուծուել այդ երկըրներ:

Միւս կողմից, հայկական ապրանքներն առանց մաքսային վճարի կարող են իրացուել Եւրասիական տնտեսական միութիւնում, եւ նկատի առնելով Իրանի նկատմամբ վերջին շրջանում մեղմ քաղաքականութիւնը՝ Հայաստանը դառնում է լաւագոյն վայրը ժամանակակից արհեստագիտական սարքաւորումներ եւ դրանց հենքի վրայ նաեւ այլ ապրանքներ ստեղծելու եւ իրացնելու նաեւ իրանական շուկայում: Այսինքն, տընտեսական նախընտրութեան տեսակէտից, Հայաստանը աշխարհի ներդրումային քաղաքականութեան քարտէզում սկսում է գրաւել իր տեղը: Այս ամէնից, բնական է, չի կարող զերծ մնալ աշխարհասփիւռ հայ համայնքը, եւ մեր հիմնական ուժը ցանկանում ենք տեսնել հէնց հայկական համայնքի աշխուժութեամբ: Դա նշանակում է, որ մեր հայրենակիցները, ովքեր աշխարհի տարբեր անկիւններում ստեղծել են ինչ որ արժէք՝ լինի արհեստագիտական, լինի այլ ամենատարբեր ոլորտներում, ինչպէս նաեւ՝ կապեր ու հնարաւորութիւններ, ներկայանան Հայաստանում: Առաջինը հէնց նրանք պէտք է լինեն, ինչը խթան կը հանդիսանայ նաեւ օտարերկրացիների մուտքը առաւել լիարժէք ապահովելու ուղղութեամբ:

Ինչպիսի՞ արտօնութիւններ էք այսօր առաջարկում ներդրողներին:

Այսօր արդէն ունենք նոր օրէնսդրութիւն, ըստ որի՝ գործում է ազատ տնտեսական գօտի, եւ ունենք արդէն երկու այդպիսի գօտի, ու նախատեսում ենք նաեւ արդիւնաբերական գօտու ստեղծում: Ազատ տնտեսական գօտում գործում են հարկային բոլոր տիպի արտօնութիւնները՝ բացառութեամբ եկամտահարկի, որը աշխատողի կողմից պիտճէ մուտքագրուող գումարն է, մնացած բոլոր հարկատեսակները՝ աւելացուած արժէքի հարկը, շահոյթահարկը, մաքսային վճարներն ազատուած են այս գօտիներում: Երկրորդ կարեւոր տեղեկութիւնը՝ ցանկացած խոշոր ներդըրման դէպքում, ասենք՝ 50 միլիոն եւ աւելի, պատրաստ ենք օրէնսդրական առանձին լուծում տալ, եթէ այն համապատասխանում է Հայաստանի տնտեսական առաջնահերթութիւններին:

Որո՞նք են այդ առաջնահերթ ոլորտները:

Դրանք տասնմէկն են եւ ներառուած են Հայաստանի արդիւնաբերական քաղաքականութեան մէջ՝ տեղեկատուական արհեստագիտութիւններ, հիւսուածեղէնի, կօշիկի եւ կաշուէ արտադրութիւն, դեղագործութիւն եւ կենսաարհեստագիտութեան, խմիչքների արտադրութիւն, մրգերի հենքի վրայ պատրաստուող պահածոներ եւ այլն, ճկնարդիւնաբերութիւն եւ գիւղատնտեսական վերամշակման ուղղուածութեան արտադրանք: Առանձին քննարկում ենք նաեւ քիմիական արդիւնաբերութիւնը եւ ժամանակակից սարքաշինական արդիւնաբերութիւնը: Այս բոլոր ուղղութիւններով ցանկացած ներդրում քաջալերուելու է, խրախուսուելու է եւ առանձին օրէնքի տեսքով տրուելու են արտօնութիւններ:

Մենք այսօր արդէն ունենք օրէնքով նախատեսուած արտօնութիւն Հայաստանում աշխատատեղերի ստեղծման ուղղութեամբ, եւ եթէ այս աշխատատեղերի ստեղծման արդիւնքում նաեւ ապրանքը արտահանւում է, ապա պետութիւնն այդ աշխատողի աշխատավարձը 100 տոկոսով վերցնում է իր վրայ: Սա շատ լուրջ խթան է, եւ պարզապէս անհրաժեշտ է, որ մեր դրսում գործող կազմակերպութիւնները եւ հայրենակիցները ծանօթ լինելով այս ամէնին՝ առաջինը մուտք գործեն Հայաստան, որպէսզի այլազգիները հետեւեն իրենց օրինակին:

⇨

Արտահանման դէպքում կառավարութիւնն ի՞նչ է առաջարկում:

Մենք ունենք արտահանման ապահովագրութեան համակարգ՝ ներդրուած Հայաստանում, մասնաւորապէս նշածս ապրանքների արտահանման դէպքում, օրինակ՝ արտահանումը մինչեւ 600 հազար ամերիկեան տոլարին համարժէք դրամով, կարող է օգնութիւն ստանալ նաեւ պետութեան կողմից: Ունենք ապահովագրական համակարգ նաեւ մինչեւ արտահանումը կամ մինչեւ արտադրութիւնը, եթէ այդ ձեռնարկութիւնը այդ ուղղութեամբ է աշխատում, ապա կարող է վարկ ստանալ իր նախնական կամ հումքային հատուածը համալրելու համար, եւ այդ դէպքում նոյնպէս ունենք նպաստելու համակարգ, այսինքն՝ պետութիւնը տոկոսադրոյքի մի մասը վերցնում է իր վրայ: Արտահանման ժամանակ, օրինակ, եթէ Ռուսաստան է արտահանւում, նկատի առնելով ռուբլու նկատմամբ մեծ տատանումը, մինչեւ վեց տոկոս նպաստ ունենք, այլ արժոյթների նկատմամբ՝ մինչեւ երեք տոկոս ունենք: Սրանք որոշակի գործիքներ են, որ այսօր կան, եւ ամենակարեւորներից մէկն այն է, որ մենք երկրում ներդրումային քաղաքականութեան նկատմամբ իրականացնում ենք ոչ միայն բաց դռների քաղաքականութիւն, այլ պաշտպանութիւնն ենք բարձրացրել նոր աստիճանի. ցանկացած ներդրող կարող է իր վէճը տեղափոխել նաեւ Հայաստանից դուրս դատական համակարգում լուծելու. խօսքը տնտեսական վէճերի մասին է: Սա լրացուցիչ երաշխիք է, որ որեւէ ներդրող երբեւէ չմտածի, որ Հայաստանում կարող է բախուել արդարադատութեան ոչ պատշաճ վարքագծի:

Շատերին մտահոգում է Հայաստանում տնտեսութեան բարձր փտածութիւնը: Ի՞նչ գործնական քայլեր են իրականացւում փտածութեան դէմ:

Փտածութեան այնպիսի երեւոյթ է, որ բնորոշ է բոլոր պետութիւններին եւ հասարակութիւններին, սակայն մեր մօտ դա առաւել բացասական է արտայայտւում, որովհետեւ լինելով փոքր եւ տնտեսական ոչ բարձր մակարդակի երկիր՝ փտածութիւնը ուղղակիօրէն հարուածում եւ քայքայում է տնտեսութիւնը: Ուստի, որպէսզի այս ամէնի դէմ իրական եւ արդիւնաւէտ պայքար իրականացուի, առաջին պայման է դրուել թափանցիկութեան մակարդակի բարձրացումը եւ երկրորդ՝ օրէնքի, կամ պատասխանատուութեան անխուսափելիութեան սկզբունքի գործադրումը: Այս ուղղութեամբ, ներկայում նաեւ պետական պաշտօնատար անձանց ամբողջական յայտարարագրման համակարգն է զարգացւում, որպէսզի թէ՛ պաշտօնատար անձինք եւ թէ՛ քաղաքացիները, ովքեր փոխկապուած են պաշտօնատար անձանց հետ, հրապարակային հաշուետուութիւններ եւ յայտարարագրեր ներկայացնեն: Սա կ՛օգնի, որպէսզի փտածութեան դէմ պայքարը լինի առաւել առարկայական եւ առաւել արդիւնաւէտ:

Դուք յայտարարել էք նաեւ Հայաստանում մենաշնորհների դէմ պայքարի մասին: Ի՞նչ քայլեր են իրականացւում եւ արդեօք առկա՞յ է քաղաքական կամք՝ հակամենաշնորհային քաղաքականութիւնը յաջողելու համար:

Մենաշնորհները ձեւաւորուել են առանձին դէպքերում նաեւ փտածութեան դրսեւորումների արդիւնքում: Այստեղ էլ կայ յստակ դրսեւորուած կամք թէ՛ նախագահի, թէ՛ կառավարութեան՝ վարչապետի կողմից, ինչպէս նաեւ՝ այս հարցը երկու քաղաքական ուժերի՝ ՀՅԴ-ի եւ ՀՀԿ-ի համաձայնագրի կարեւոր դրոյթն է, եւ մեր քայլն է, որպէսզի կարողանանք յստակ ծրագրեր իրականացնել այս ուղղութեամբ: Արդէն իսկ առաջին գործողութիւնները նախաձեռնուել են: Խօսքը ընկերային նշանակութեան 15 ապրանքների մա—սին է՝ շուկայում ապահովելու հրապարակայնութիւն, բացութիւն եւ ներմուծման սահմանափակումների վերացում, բացառութեամբ այն դէպքերի, երբ տեղական արտադրութիւն կայ, եւ պետութիւնն իրականացնում է տեղական արտադրութեան պաշտպանութիւն:

Մեր խորին համոզմամբ, եթէ մի ապրանք, արտադրւում է Հայաստանում, մենք պէտք է խթանենք այդ ապրանքի մրցունակութեան բարձրացումը եւ իրացումը արտաքին շուկաներում: Դրա համար պետութիւնը իրականացնելու է նաեւ տեղական արտադրութեան պաշտպանութեան ամբողջական համակարգ:

Պարո՛ն Մինասեան, ձեր ուղերձը՝ հայ համայնքին:

Մեր հայրենակիցներին դիմելով՝ կը ցանկանայի հաւաստիացնել, որ Հայաստանը փոխուել է, մեր հայրենիքն այսօր ՏՏ-ի եւ բարձր արհեստագիտութիւնների ոլորտում աշխարհում իր նշանակալի տեղն է զբաղեցնում: Սակայն կարիք ունենք համահայկական համախմբուածութեան, ներդրումների խթանման եւ որոշակի ուղղութիւններով արդիւնքների ապահովման: Մեր երկրի անվտանգութեան երաշխաւոր հայոց բանակն այսօր կարիք ունի տնտեսական նախաձեռնութիւններով ապահովման: Անվտանգութեան երկրորդ բաղադրիչը մեր տնտեսութիւնն է: Եթէ զարգացած տնտեսութիւն ունեցանք, ուրեմն կ՛ունենանք աւելի անվտանգ երկիր, որը նշանակում է նաեւ տնտեսութեան նոր աշխուժացում, քաղաքացիների նոր մուտք Հայաստան, զբօսաշրջիկների քանակի աւելացում, ենթակառուցուածքների զարգացում, եւ այս ամբողջ շղթան յանգեցնում է մէկ բանի՝ մենք բոլորս պէտք է համախմբուենք ուժեղ Հայաստան ունենալու գաղափարի շուրջ: Դրա համար, դիմելով մեր հայրենակիցներին, կոչ եմ անում ներդրումներ կատարել Հայաստանում, եւ որպէս տնտեսութեան նախարար՝ երաշխաւորում եմ, որ առաջին իսկ արձագանգը լինելու է մեր կողմից՝ այդ ներդրումները յաւուր պատշաճի պաշտպանութիւն իրականացնելու հարցում:

Երկրորդ կարեւոր ուղերձը՝ հայկական ապրանքների առաջմղումն է արտաքին շուկաներում: Ցանկալի է իւրաքանչիւր հայ, որ շահագրգռուած լինի հայկական ապրանքներ ձեռք բերելու եւ ներկայացնելու նաեւ աշխարհին: Ես այսօր հպարտօրէն կրում եմ հայկական առաջին «Արմֆոն»-ը, որ կրում է մեր այբուբենի առաջին տառը: Մենք պէտք է կարողանանք նման ապրանքներն իրացնել եւ կարողանալ պահանջարկ ձեւաւորել, որ տեղական արտադրութիւնը զարգանայ: ❑

Հայ Կեանքի եւ կիպրահայ համայնքի լուրերուն՝ հայերէնով կամ անգլերէնով հետեւելու համար, այցելեցէք «Արձագանգ»ի կայքէջը՝
www.artsakank.com.cy

Արցախ՝ Մէկ Սերնդի Ճակատագիր

Արցախեան շարժման սկզբնաւորումից անցել է 28 տարի:

28 տարին մէկ սերնդի գիտակցական կեանքի ձեւաւորման եւ աշխուժ կենսագործունէութեան ժամանակահատուած է: Այն սերնդին, որը գիտակցականօրէն (նաեւ հասարակական, քաղաքական առումներով) կայացաւ արցախեան շարժման գործընթացների մէջ, կարելի է անուանել ղարաբաղեան սերունդ: Արցախեան սերունդը, յանուն հայկական պատմական տարածքի ազատագրման, դուրս եկաւ ոչ միայն որոշակի թշնամու, այլեւ խորհրդային հզօր մեքենայի դէմ, Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ, միջազգայնացած հարցի նկատմամբ ճնշումին դիմակայեց, եւ քանի դեռ վերջնականօրէն լուծուած չէ արցախեան խնդիրը, մնում է արցախեան պայքարի մասնակիցն ու զինուորը:

Ի հարկէ անցած 28 տարիների ընթացքում գերակշռել է արցախեան «հրաբուխի քնած» կամ սահմանային յարաբերական անդորրի ժամանակահատուածը, երբ արցախեան սերունդը հնարաւորութիւն է ունեցել աւելի շատ զբաղուելու իր առօրեայ հոգսերով, ջանքերը կեդրոնացնել ժողովրդավարութեան, ընկերային-տնտեսական եւ ներքին այլ խնդիրների վրայ, բայց նրա մէկ աչքն ու ականջը միշտ եղել է Արցախի կողմը: Արցախեան շարժումն ու յաղթանակը հայ ժողովրդի ու արցախեան սերնդի համար ամէնից առաջ արժանապատուութեան վերականգնման եւ հատուցման հարց էր՝ անցած դարասկզբին տեղի ունեցածի դիմաց: «Արցախեան» երեւոյթով հայ ժողովուրդը շտկեց մէջքը, արձանագրեց, թէկուզ մէկ հատուածի չափով, խլուած հայրենիքի վերադարձ: Արցախեան պայքարը մեծ ազդեցութիւն է գործել ղարաբաղեան սերնդի ազգային ինքնագիտակցութեան վրայ: Արցախեան յաղթանակը այն կերտած սերնդին հաղորդեց ինքնավստահութիւն, հոգեկան անդորր եւ հաւատ՝ սեփական ուժի ու հնարաւորութիւնների նկատմամբ: Այս յաղթանակը հոգեւոր կամուրջ գոյացրեց, որի շնորհիւ հայ մարդը ներշնչուեց իր անցեալով եւ տէր զգաց հազարամեակների պատմութեանը: Մանաւանդ նկատի ունենալով, որ 70 տարի եւ դրանից էլ առաջ, անգամ սեփական հողի վրայ ապրելով՝ հայ մարդը ասես այդ հողի իրական տէրը չէր, հողի եւ մնացած արժէքների տէր ու տնօրէնը կարծես թէ դարձել էին նուաճողները:

Արցախի ազատագրումից, զուգահեռաբար Հայաստանի անկախացումից յետոյ անգամ, խաղաղ առօրեայի մէջ հայ մարդու հոգեբանութեան վրայ զգալի եղաւ ղարաբաղեան ձեռքբերման ազդեցութիւնը: Ասուածը աւելի ակնառու դարձնելու համար պատկերացնենք, թէ մենք կորցրել ենք Արցախը (Աստուած մի՛ արասցէ) եւ դրանից յետոյ արցախեան սերնդի ներկայացուցիչը սեղանի մօտ հայրենասիրութեան թեմայով կենաց է խմում, իր երեխային հպարտօրէն հայոց պատմութիւն է պատմում, պարզապէս որպէս կայացած մարդ ինքնավստահութեան յաւակնոտութեամբ շփւում է ընկերների, շրջապատի կանանց՝ մեծ ու փոքրի հետ: Անհնար է թւում, ամօթը թոյլ չէր տայ:

Հակառակ օրինակը հարեւան երկիրն է, որն, օրինակ, միլիոնաւոր տոլարներ է տալիս սպանական ինչ-որ խմբի՝ խնդրելով, որ իրենց

Շար. Էջ 11

Հռոմի Պապը Ցեղասպանութեան Հարցով Հետեւեցաւ Իր Սրտի Կանչին, Ոչ Թէ Խորհրդատուներուն

Յարութ Սասունեան

Մինչ ամբողջ աշխարհի հայութիւնը ցնծութեան մէջ էր՝ Հռոմի սրբազան քահանայապետ Ֆրանկիսկոս պապի դէպի առաջին քրիստոնեայ երկիր պատմական «ուխտագնացութեան» առիթով, սակայն մարդոց մեծ մասը տեղեակ չէր Վատիկանի քուլիսներու ետին մինչեւ անոր այցելութիւնը ծաւալած քննարկումներուն մասին, կապուած՝ Հայոց ցեղասպանութեան հարցին:

Հռոմի պապի երկակի դերը՝ իբրեւ Կաթողիկէ եկեղեցւոյ քահանայապետ եւ Վատիկանի պետութեան ղեկավար, երբեմն խնդիրներ կը ստեղծէ Սուրբ Աթոռի պատերէն ներս եւ անոր սահմաններէն դուրս, այնպէս՝ ինչպէս տեղի ունեցաւ անցեալ շաբաթ, Հռոմի պապի Հայաստան կատարած այցելութեան ժամանակ:

Երկարատեւ նախապատրաստութիւններէ եւ ներքին քննարկումներէ ետք, Հռոմի պապը 24 Յունիսին ժամանեց Հայաստան, պատրաստ՝ հանդէս գալու շարք մը քարոզներով եւ ելոյթներով, իր եռօրեայ այցելութեան ընթացքին: Զարմանալի էր, որ անոր պատրաստած ելոյթներէն ոչ մէկը կը բովանդակէր «Հայոց ցեղասպանութիւն» բառերը, սակայն կային բազմաթիւ վկայակոչումներ՝ «ողբերգութեան, կոտորածի, սարսափելի փորձութեան եւ անսահման տառապանքի» վերաբերեալ: Անոր քարոզներուն մէջ բազմիցս գործածուած է «Մեծ եղեռն» հայերէն եզրոյթը, որ «մեծ ոճիրի» փոխարէն՝ Վատիկանի կողմէ սխալմամբ թարգմանուած է իբրեւ «մեծ չարիք»: Եզրաբանութեան մէջ փոփոխութեան առաջին նշումը յայտնի դարձաւ մինչ Հռոմի պապի հովուական այցելութիւնը հայ ժողովուրդին յղուած տեսաուղերձին մէջ, ուր չէր յիշատակուեր Հայոց ցեղասպանութիւնը: Հետագային, Հայոց ցեղասպանութեան յուշահամալիր կատարած այցելութեան ընթացքին քահանայապետը հիւրերու գիրքին մէջ եւս չգրեց «Հայոց ցեղասպանութիւն» բառերը՝ արտագրելով նախապատրաստուած բնագիրը...

Կրնայ երկու պատճառ ըլլալ, թէ ինչո՛ւ կը խուսափէին գործածելէ «Հայոց ցեղասպանութիւն» բառերը.

1) Քանի որ «Հայոց ցեղասպանութիւն» եզրոյթը անցեալ տարուան ապրիլին Սուրբ Պետրոս տաճարին մէջ մատուցած պատարագի ժամանակ արդէն հաստատուեր էր Հռոմի Ֆրանկիսկոս պապին կողմէ, ապա Վատիկանի պաշտօնեաները որոշեր էին հանդէս գալ «խաղաղութեան եւ հաշտեցման» նոր ուղերձով մը:

2) Քահանայապետի արտաքին քաղաքականութեան խորհրդականները կրնայ ըլլալ որ դժկամօրէն վերաբերած էին Հայոց ցեղասպանութեան հարցը մէկ անգամ եւս բարձրացնելուն՝ թրքական կառավարութեան անցեալ տարուան կտրուկ արձագանգէն եւ Վատիկանէն թուրք դեսպանը 10 ամիսով յետս կոչուելէ ետք:

Սակայն Հռոմի Ֆրանկիսկոս պապը զարմացուց բոլորը, երբ Երեւանի՝ Հայաստանի Հանրապետութեան նախագահի նստավայրին մէջ, 24 Յունիսին արտասանած իր ելոյթին ընթացքին շեղեցաւ նախապատրաստուած եւ լրատուական միջոցներուն արդէն բաժնուած բնագրէն՝ աւելցնելով «ցեղասպանութիւն» բառը: Ահա թէ ի՛նչ ըսաւ Հռոմի պապը՝ յիշելով իր աւելի վաղ՝ 2015 թուականի Ապրիլի 12-ի քարոզը. «Այդ առիթով յիշատակուեցաւ 100-րդ տարելիցը Մեծ եղեռնի, «Մեծ չարիքը», որ հարուածեց ձեր ժողովուրդը եւ անթիւ անհամար զոհերու պատճառ դարձաւ: Ցաւօք, այդ ողբերգութիւնը, այդ ցեղասպանութիւնը, գլխաւորեց տխուր ցուցակը անցեալ դարու անմարդկային աղէտներու, որոնք իրականացան ցեղապաշտական, գաղափարախօսական եւ կրօնական մոլորեցնող շարժառիթներով, որոնք եւ մթագնեցին միտքը մարդասպաններու, որոնք նպատակադրեցին ոչնչացնել մինչեւ իսկ ամբողջ ժողովուրդներ»:

Նոյն օրը, աւելի ուշ, Սուրբ Աթոռի մամուլի գրասենեակի տնօրէն հայր Ֆետերիքօ Լոմպարտի բացատրեց, թէ ինչո՛ւ Հռոմի Ֆրանկիսկոս պապը շեղած է իր պատրաստած բնագրէն. «Պապը կ՛ըսէ այն, ինչ յարմար կը գտնէ, եւ ոչ ոք կ՛որոշէ, թէ քահանայապետը ի՛նչ պէտք է ըսէ: Հռոմի պապը Հայաստան այցելութեան ընթացքին «ցեղասպանութիւն» բառը չօգտագործելու որեւէ պատճառ չունէր: Իրականութիւնը յստակ է, եւ մենք երբեք զայն չենք ժխտեր»:

Ելոյթի մը մէջ պապի օգտագործած այդ միակ բառը չվրիպեցաւ թրքական իշխանութիւններու ուշադրութենէն: Թուրքիոյ փոխվարչապետ Նուրէտտին Ճանըքլի իր արձագանգին մէջ մեղադրեց պապը՝ «խաչակրաց մտածելակերպ» ցուցաբերելուն մէջ: Ճանըքլի դարձեալ կրկնեց թրքական սովորական կեղծիքները Հայոց ցեղասպանութեան մասին: Հռոմի պապի մամուլի քարտուղար Լոմպարտի մերժեց փոխվարչապետին քննադատութիւնը՝ նշելով, որ «Հռոմի պապը խաչակրաց արշաւանքի չէ ելած: Ան ոչ մէկ բառ ըսած է թուրք ժողովուրդին դէմ»:

Հրաժարելով խոնարհիլ թրքական ճնշման տակ՝ Հռոմի Ֆրանկիսկոս պապը Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսին հետ 26 Յունիս 2016-ին ստորագրեց «Համատեղ հռչակագիր», որ կը վկայակոչէր Վատիկանի կողմէ Հայոց ցեղասպանութեան աւելի կանուխ ճանաչումը. Ֆրանկիսկոս պապի 12 Ապրիլ 2015-ի հանդիսաւոր պատարագը եւ 27 Սեպտեմբեր 2001-ին Գարեգին Բ.-ի եւ Յովհաննէս Պօղոս Բ. քահանայապետին միջեւ ստորագրուած «Համատեղ Յայտարարութիւնը»: Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւս մէկ «համատեղ պաշտօնական հաղորդագրութիւն» ստորագրուած է 29 Նոյեմբեր 2000-ին, Յովհաննէս Պօղոս Բ. քահանայապետին եւ Գարեգին Բ.-ի կողմէ:

Յունիս 26-ին Հռոմ վերադարձի ճանապարհին «Ֆրանս փրես» լրատուական գործակալութեան լրագրողը հարցուց Հռոմի պապին, թէ ինչո՞ւ ան Երեւանի մէջ որոշեց իր ելոյթին աւելցնել «ցեղասպանութիւն» բառը: Պապը մանրամասն բացատրեց, որ «ցեղասպանութիւն»ը միակ բառն է, որուն ազդեցութեան տակ ինք հասակ նետած է՝ հայերու զանգուածային սպանութիւնները նկարագրելու պարագային: Պապը նշեց նաեւ դէպի Ազրպէյճան եւ Վրաստան կատարելիք իր յառաջիկայ այցելութիւններուն մասին, որոնք տեղի պիտի ունենան Սեպտեմբեր 30-էն մինչեւ Հոկտեմբեր 2:

Հռոմի Ֆրանկիսկոս պապը դէպի Հայաստան իր «ուխտագնացութեան» մօտեցաւ առաւելագոյն ազնուութեամբ եւ իր սրտի խօսքը ըսաւ Հայոց ցեղասպանութեան մասին՝ անտեսելով իր խորհրդականներուն եւ ճառ գրողներուն քաղաքական հաշուարկները: Ան նախընտրեց ինքզինք դրսեւորել իբրեւ Աստուծոյ ճշմարիտ ծառայ, այլ ոչ թէ՝ խորամանկ քաղաքական գործիչ...

Եկաւ, Տեսաւ... Եւ Մեզ Հմայեց

Գէորգ Պետիկեան

Միտքս պարզեմ: Քաջատեղեակ էք, շատ հաւանաբար՝ այո՛, թէ Յունիս 24-ին, եռօրեայ իր այցելութեամբ, Հայաստան եկաւ Կաթոլիկ եկեղեցւոյ քահանայապետ, հոգեւոր առաջնորդ եւ Վատիկան պետութեան ղեկավար Ֆրանկիսկոս պապը:

Հովուապետական այս աննախընթաց այցելութեան երեք օրերու ընթացքին հաւանաբար ինծի նման շատեր ալ կապուած ու նոյնիսկ գամուած մնացին հայկական եւ քիչ մըն ալ տեղական հեռատեսիլի կայաններուն դիմաց, որպէսզի աւելի մօտէն հետեւէին Հայաստան՝ «Առաջին քրիստոնեայ երկիր» խորագրով մեր հայրենիքը այցելող եւ կամ ուխտագնացութեան եկող պապի իւրաքանչիւր քայլին, խօսքերուն, պատգամներուն, մաղթանքներուն, օրհնութիւններուն եւ կոչերուն:

Պէտք է հպարտօրէն շեշտել, թէ մեզի պէս ամբողջ աշխարհին ալ հետեւեցաւ այս մէկուն: Ու մենք, իբրեւ եկեղեցի եւ պետութիւն, եւ համայն հայութեամբ ու արժանավայել կերպով ու հայու յատուկ հիւրընկալութեամբ, ե՛ւ կենցաղով, ե՛ւ նկարագրով, գրկաբաց ընդունեցինք զինք:

Պապը եկաւ մեր երկիրը, եւ իր այս գալուստով մեր արդի պատմութեան մէջ մեզի համար նոր ու լուսաւոր էջ մը բացաւ:

Ապրի՛: Կարեւոր էջ մը:

Այսպէս, ան մեզի եւ աշխարհի խաղաղութեան համար միշտ աղօթեց: Աղօթեց նաեւ դարերու կեանք ունեցող մեր Սուրբ Էջմիածնի կամարներուն տակ: Ապա Գիւմրիի Վարդանանց հրապարակին վրայ կատարեց «Էքիւմենիք» արարողութիւն, իսկ Երեւանի «Հանրապետութեան» հրապարակին վրայ տպաւորիչ մաղթանքներ ըրաւ:

Իբրեւ հոգեւոր մեծ հովիւ՝ ան մեզ միշտ օրհնեց: Օրհնեց բոլորս՝ հոգեւորականէն մինչեւ երեխաները: Իր հրապարակային խօսքերուն մէջ յորդորեց մեծին եւ պզտիկին: Յարգանքով մօտեցաւ հաշմանդամներուն եւ իւրաքանչիւրին մէկ առ մէկ համբուրեց: Հիացաւ մեր պատմութեան եւ մեր դարաւոր հայրենիքին ու յատկապէս ամէն առիթով աչքերը յառեց պիպլիական մեր սուրբ լերան՝ Արարատին: Ու վերջին՝ բարի յիշատակներով ու յուշանուէրներով իր աթոռը վերադարձաւ:

Յիշեցման կարգով ըսեմ նաեւ, իբրեւ առաջին մեծ նախաձեռնողի, պատիւ իրեն, Հռոմի նոյն այս սրբազան պապը 2015-ի Ապրիլ 12-ին, Վատիկանի Սուրբ Պետրոս տաճարին մէջ ոչ միայն պատմական պատարագ մատուցեց, այլեւ իբրեւ Կաթոլիկ եկեղեցւոյ քահանայապետ՝ իր քարոզուղերձին մէջ յստակօրէն յիշեց 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւնը՝ Հայոց ցեղասպանութիւնը, զայն որակելով իբրեւ այդ դարու առաջին աննախադէպ ողբերգութիւնը: Աւելի՛ն. Դարձեա՛լ պատիւ, այս մեր հիւր սրբազան քահանայապետը նոյն տարին մեր սուրբերէն Սուրբ Գրիգոր Նարեկացին հռչակեց Տիեզերական եկեղեցւոյ վարդապետ:

Այսինքն, արդէն մեծ եւ կարեւոր նշանակութեան գործօն է մեր ժողովուրդի մղած պայքարի դաշտին վրայ: Իսկ իր այս այցելութեան ան քանի մը անգամներ հրապարակային կերպով յիշեց «ցեղասպանութիւն» բառը:

Իբրեւ հայ եւ պարզ անհատ՝ անձնապէս հիացած եմ Ֆրանկիսկոս պապով: Ան ինծի համար իրապէս գիտակից հոգեւորական մըն է, ճշմարիտ ղեկավար մը եւ իր կոչումին տէր անձնաւորութիւն մը, ինչպէս նաեւ՝ Աստուծոյ հաւատարիմ

Շար. Էջ 13

Շուշիի Ազատագրումը՝ Մերօրեայ Յուսաթով Մեծագոյն Մխրանքը

Աստուր Տէվլէթեան

Իրադարձութիւններ կան, որոնք թէպէտ հուժկու, նոյնիսկ լայնածաւալ ազդեցութիւն կը գործեն, մինչ կը պատահին, բայց ժամանակի թաւալքին հետ, տակաւ կը խամրի անոնց անմիջական ներգործութիւնը եւ, ի վերջոյ, նաեւ կը մաշի ու կ՛անհետի անոնց բովանդակած իմաստը՝ զանոնք յանձնելով պատմութեան փոշեթաթախ էջերուն: Կան եղելութիւններ ալ, սակայն, որոնք իբրեւ զգայացունց երեւոյթներ հանդէս գալէ ետք, անցնող իւրաքանչիւր տարուան հետ կը ստանան նոր որակ եւ նոր նշանակութիւն, առանց սակայն, նուազագոյն իսկ չափով, կորսնցնելու սկզբնական ճաճանչագեղ իրենց փայլատակումը:

Անտարակոյս, այս՝ հազուագիւտ վերջիններու շարքին կը դասուի Շուշիի հերոսական ազատագրումը, որ ազգային արդար հպարտութեամբ կը տոգորէ հայ ժողովուրդի բոլոր զաւակները, ուր որ ալ գտնուին անոնք:

Ուրբաթ, Մայիս 8, 1992-ի լոյս գիշերը, սկիզբ առաւ ռազմական հոյակապ գործողութիւնը, հրամանատարութեամբ հազարապետ զօրավար Արկադի Տէր Թադէոսեանի (որ իր զինուորներուն ծանօթ է «Կոմանդոս» փաղաքշական մակդիրով): Ի դէպ, նախատեսուած էր որ յարձակումը սկսէր Մայիս 4-ին, (նախորդող երկուշաբթի օրը) բայց սպառազինութեան անբաւարարութեան, կլիմայական պայմաններու ոչ-բարենպաստ ըլլալուն, եւ կարգ մը այլ՝ երկրորդական պատճառներու բերմամբ, չորս օր յետաձգուելով է որ իրականացաւ ան, շուրջ 25 քիլոմեթր երկայնք ունեցող ճակատային գիծով:

Մեր Ինքնապաշտպանութեան Ուժերը (ինչպէս կը կոչուէին մեր բանակայինները) – 1200 մարտիկներէ բաղկացած՝ չորս յարձակողական եւ մէկ պահեստային խումբերով, միաժամանակ շղթայազերծեցին առճակատման հերոսական արշաւանքը:

Եւ հակառակ որ անհամեմատօրէն գերակշիռ էին թշնամիին թէ՛ զօրքը թէ ալ զինամթերքը, մեր քաջերը, հրաշագործ խոյանքով, ջախջախեցին նախ Շուշիի բարձունքներուն չորս տարբեր բնակավայրերու մէջ, եւ ապա՝ Շուշիի մատոյցներուն դիրքեր գրաւած ազերի զօրախումբերը: Յաջորդեց յարձակումը Բերդաձորի ուղղութեամբ եւ յաջողութեամբ իրագործուեցաւ ամբողջ ենթաշրջանի ազատագրումը: Ի վերջոյ, Ստեփանակերտի կողմէն յառաջ տարուող արշաւանքով, թշնամին ջաջախուեցաւ Շուշիի բարձունքներուն վրայ, մեր ազատամարտիկները դիրքեր գրաւեցին Շուշիի երեք ծայրամասերուն մէջ եւ ապա՝ ոչնչացնելով թշնամին, Մայիս 9-ին ազատագրեցին հայկական պատմական այդ հիւաւուրց բերդաքաղաքը:

Արդարեւ Շուշին, մայրաքաղաք Ստեփանակերտէն 10 քիլոմեթր հարաւ, ո՛չ միայն ռազմագիտական նշանակութիւն ունեցող չափազանց կարեւոր կէտ է, այլ նաեւ է՛ ազգային ոգեղէն մեր ամրոցներէն մէկը, հայկականութեամբ յագեցած երկարամեայ իր հպարտառիթ պատմութեամբ:

Շուշիի ազատագրումը, ռազմականէն բացի, նաեւ կենսական նշանակութիւն ունէր, տնտեսական առումով: Մինչ բերդաքաղաքը կը գտնուէր ազերիներու տիրապետութեան տակ, ամբողջովին շրջապատուած էին ցամաքային եւ օդային բոլոր ուղիները: Ելեկտրականութեան, կազի եւ ըմպելի ջուրի ահռելի տագնապէն զատ, Ստեփանակերտը եւ յարակից բնակավայրերը ենթակայ էին Շուշիէն անընդհատ կատարուող ռմբակոծումներու եւ հրթիռակոծութիւններու՝ իբրեւ հետեւանք կաթուածահար դարձնելով Արցախի ամբողջ տնտեսութիւնը:

Հետեւաբար, ամէն կասկածէ վեր է, թէ 1992

Մայիս 9-ի ամենափայլուն այս ռազմական նուաճումը առաւել եւս ամրապնդեց մեր քաջերուն յաղթանակի ոգին, որ աստիճանաբար, սակայն հետեւողականօրէն կը կոփուէր՝ պայքարի հերոսական մարտերու ընթացքին արձանագրուող իրերայաջորդ ակնառու յաջողութիւններով:

Անվարան կարելի է հաստատել թէ բերդաքաղաքի ազատագրումը որակական նոր հանգրուանի մը հասցուց Արցախեան շարժումը, որովհետեւ անիկա վճռորոշ բեկում յառաջացուց պատերազմի ամբողջ ընթացքին մէջ՝ վախճանական լիակատար յաղթանակը դարձնելով աւելի՛ քան իրագործելի: Շուշիի ռազմական գործողութեան բացարձակ յաջողութիւնը բարոյական եւ հոգեբանական խորտակիչ հարուած պատճառեց թշնամիին, որ, անկէ ետք, երբեք ի վիճակի չեղաւ թօթափելու պարտուողի հոգեբանական բարդոյթը:

Տարօրինակ բայց հաճելի զուգադիպութեամբ մը, Շուշիի ազատագրումէն 47 տարիներ առաջ, դարձեալ Մայիս 9-ին, խորհրդային բանակի հայ զինուորները, ներառեալ նաեւ բազմաթիւ արցախցիներ, Պերլինի մէջ քոչարի պարեցին, տօնելու համար Երկրորդ Աշխարհամարտի յաղթական աւարտը:

Եւ այսօր, մինչ անհուն հպարտութեամբ կը նշենք մերօրեայ հիասքանչ այս մեծ յաղթանակին 24-ամեակը եւ արժանի կերպով կը փառաբանենք ռազմաճակատի մեզի յայտնի ու անյայտ բոլոր հայ քաջորդիները, երկիւղածութեամբ եւ խոր երախտագիտութեամբ կը խոնարհինք նաեւ յիշատակին առջեւ Շուշիի ազատագրման ընթացքին զոհուած մեր 57 հերոսներուն, ինչպէս նաեւ Արցախի ազատագրական պայքարի յաջողութեան համար իրենց կեանքն իսկ նուիրաբերած հոգեհարազատ բոլոր մեր քոյրերուն եւ եղբայրներուն: Սակայն նաեւ՝ 1994-ի զինադադարէն ետք, դաւադիր արճակազէններու փամփուշտներուն զոհ դարձած մեր հերոս մարտիկներուն եւ տակաւին շաբաթներ առաջ, ազերի գազաններու կողմէ վայրագաբար նահատակուած մեր անմեղ հայրենակիցներուն:

Շուշիի ազատագրումը, հայ ժողովուրդին համար խորապէս ներշնչող անհրաժեշտութիւն մըն էր, եւ միաժամանակ էր նաեւ՝ պատմականօրէն անկիւնադարձային երեւոյթ մը: Որովհետեւ, ռազմական անզուգական այդ սխրագործութեան իբրեւ անմիջական արդիւնք՝ արմատապէս վերականգնեցաւ եւ վաւերական կենդանի, շօշափելի օրինակով վերահաստատուեցաւ պապենական մեր հողերուն վրայ ապրելու մեր ժողովուրդին անժամանցելի եւ անտեղիտալի իրաւունքը: Շունչ ու մարմին ստացաւ ազգային սրբազան մեր պահանջատիրութիւնը:

Շուշիի եւ դիւցազնական այլ հերոսամարտերով ու հազարաւոր զոհերու արեան գինով ազատագրուած Արցախը՝ հայրենիք է, սրբազնագոյն հողատարածք, որուն մէկ թիզն անգամ զիջելը դաւաճանութիւն է: Հայրենիք է, բազմատասնեակ սերունդներու արդար քրտինքով ոռոգուած, դարաւոր տքնաջան աշխատանքով ծաղկեցուած եւ հերոսական անթիւ խիզախումներով պաշտպանուած սրբազան մեր բնօրրանը, ուր կը հանգչին մեր պապերուն սուրբ աճիւնները: Հայրենիք է, որ անքակտելի մասը կը կազմէ մեր Մեծ Երազին, որուն ճամբուն վրայ ինկան միլիոնաւոր մեր քոյրերն ու եղբայրները, նահատակուեցան ու մարտիրոսացան մեր բիւրաւոր հերոսները:

Մենք չենք կրնար մոռնալ, իրաւո՛ւնքն անգամ չունինք մոռնալու մեր նահատակները:

Չենք կրնար դաւաճանել եւ պիտի չդաւաճանենք սրբազան որեւէ հողատարածքի, ինչպէս Արցախի:

Այսօր մեր պարտքն է վերանորոգ կերպով ուխտել որ, ոգի ի բռին, պիտի պայքարինք ի խնդիր մեր պահանջատիրութեան, այլապէս՝ ամօթ, հազա՜ր ամօթ մեզի բոլորիս:

Նիկոսիա, Կիպրոս

Շար. էջ 9-էն Արցախ՝ մէկ...

մարզաշապիկների վրայ գրեն այդ երկրի անունը: Այսինքն, որպէսզի աշխարհին իմանայ, թէ իրենք կան: Այո՛, այս արեւի տակ պարտուած ժողովուրդ լինելուց վատ բան չկայ: Առանց խորանալու յիշենք մեզ՝ մինչեւ արցախեան յաղթանակը:

«Արցախ»ը պատմական նոր ուղի բացեց հայ ժողովրդի առաջ եւ դարձաւ մէկ սերնդի ճակատագիրը (յուսանք, որ կայացող նոր սերնդի գիտակցութեան մէջ Արցախը կ՛ամրապնդուի, ինչպէս ընկալւում են Շիրակը, Լոռին կամ Արմաւիրը եւ այս սերնդի ճակատագիրը այլ նպատակներ կ՛ուղենշէ):

Պատահական չէ, որ երբ վտանգ սպառնաց Արցախին, արցախեան սերունդը մէկ մարդու պէս ոտքի ելաւ եւ գնաց իր ճակատագրի ետեւից: Այդ ճակատագիրն այլեւս սերնդից անբաժան է, քանի դեռ նա գոյութիւն կ՛ունենայ: Արցախեան սերնդի համար արցախեան որեւէ կորուստ իր ճակատագրի, իր անձնական կորուստն է:

Ինչո՞ւ է շարադրւում այս ակնառու ճշմարտութիւնը եւ ի՞նչ նպատակով:

Նպատակն այն եզրակացութիւնն է, որ սահմանադրօրէն ամրագրուած տարողութեամբ Արցախի տէրը հայ ժողովուրդն է եւ մասնաւորապէս արցախեան սերունդը: Արցախի հարցով շատերը կարող են բանակցել, բայց ինչ-որ բան կարող է զիջել միայն հայ ժողովուրդը եւ Ղարաբաղի սերունդը: Վերջում նրանց մօտ պէտք է գան եւ նրանց պէտք է հարցնեն բանակցողները, միջնորդներն ու ուզողները: Վերջնական վճիռը պատկանում է նրանց, ում ճակատագիրն է Արցախը: Իսկ ընդհանրապէս՝ մարդը կարող է կերտել իր ճակատագիրը, բայց սեփական ճակատագրից փախչել չի կարող:

***ԴՐՕՇԱԿ**, 24 Յունիս 2016*

Սահմանամերձ Հայը

«Այստեղէն կը սկսի Հայաստանը»

Դոկտ. Հրայր Ճէպէճեան

Դոկտ. Սուրէն Դանիէլեանն է՝ Երեւանի Խաչատուր Աբովեանի անուան պետական մանկավարժական համալսարանի «Սփիւռք» գիտաուսումնական կեդրոնի վարիչ տնօրէնը: Պոլսահայ մանկավարժ եւ «Նոր դպրոց»-ի հիմնադիր Յովհաննէս Հինդլեանի ծննդեան 150-ամեակին նըւիրուած երկօրեայ գիտաժողովին ենք: Գիտաժողովի առաջին օրը տեղի ունեցաւ Երեւանի մէջ, իսկ երկրորդ օրը շարունակուեցաւ Տաւուշի մարզի Կայան աւանին մէջ, որովհետեւ հոն՝ Կայան աւանին մէջ կանգուն է դպրոց մը՝ Յովհաննէս Հինդլեանի անունով, որ հայեցի կրթութիւն եւ դաստիարակութիւն կը ջամբէ հայ նոր սերունդին, որ, տակաւին, «վճռած» է մնալ... «սահմանամերձ» այս շրջանը: Եւ այս՝ Ազրպէյճանի սահմանէն միայն հարիւր մեթր հեռաւորութեան վրայ: Ե՛ւ հայկական դպրոց, ե՛ւ Սուրէնին հպարտանքը՝ «Այստեղէն կը սկսի Հայաստանը»:

Եթէ շրջանի բնութեան գեղեցկութիւնը կը զգլխէ ու կ՛անցնի ամէն ուշադրութիւն եւ հիացմունք, բայց կայ նաեւ հոգեկան ազդակը: Իսկ ո՞րն է հոգեկան այդ ազդակը: Որ՝ ոչ միշտ ապահով այս «սահմանամերձ» շրջանին մէջ հայը կը շարունակէ ապրիլ, բայց նաեւ՝ զարգանալ: Աշակերտները, տնօրէնը եւ ուսուցչական կազմը նոյնինքն Կայան աւանի Յովհաննէս Հինդլեան վարժարանին մէջ մեզ դիմաւորեցին: Իսկ դիմաւորե՞լը: Հայկական պար, երգ, հաց ու աղ, եւ տակաւին՝ երիտասարդ աշակերտ աղջիկներու զինւորական տարազով՝ միշտ պատրաստի գիտակցութիւնը: Անդրադարձայ, որ հայկական երգն ու պարը որքա՜ն զօրաւոր են եղեր: Եթէ սրահներու կամ գեղարուեստական յայտագիրներու ընթացքին կ՛ունկնդրես հայկական երգը եւ կը հաղորդուիս արուեստով, ապա բոլորովին տարբեր կ՛ըլլայ պատկերը, երբ «սահմանամերձ» շրջանին մէջ, առօրեայ իր մտահոգութիւններուն եւ գուցէ վախերուն եւ անապահովութիւններուն ընդմէջէն, կ՛ապրիս այդ երգերուն տուած հոգեկան ուժը: Եւ այդ երգերուն եւ պարերուն ընդմէջէն, նոյնինքն Կայան աւանին մէջ, կը զգաս հայրենի հողին ինքնութիւնը եւ անոր տուած «արժանապատուութիւնը» քեզի՝ իբրեւ հայու: Այդ հողը, որ պէտք է պահուի: Եւ երբ հայ տղաքն ու աղջիկ-ները կ՛երգէին ու կը պարէին, տեսայ, թէ որքա՜ն հաստատ էր իրենց շրթներէն ելած իւրաքանչիւր բառ: Բայց նաեւ՝ որքա՜ն կանգուն էին անոնք իրենց պարերու իւրաքանչիւր շարժումին ընդմէջէն, որովհետեւ անոնք կ՛երգէին ու կը պարէին հողի մը վրայ, որ պահուած է ու տակաւին կը պահպանուի նահատակութեամբ, եւ որուն մէջ խարսխուած է ապրելու ուժը: Այդ օր՝ մայիս 27-ին, անոնք այդ ուժը բաժնեկցեցան մեզի հետ:

«Կայան աւանը ինծի համար յաւերժութիւն է»: Լենա Վարդանեանն է՝ Յովհաննէս Հինդլեան վարժարանի տնօրէնը: «Առանց այս վայրին՝ չեմ կրնար ապրիլ»: Լենային համար իր ամբողջ էութիւնը ապրող կեանքի մը մէջ է: Հայ կնոջ ամուր կերպար՝ տոկուն նկարագիրով եւ ազգային անշեղ ինքնութեամբ, որ հայ նոր սերունդին կրթութիւն կը ջամբէ: Ան յուսահատիլ չճանչցող հայ մանկավարժ-մայրն է, ու տակաւի՛ն՝ մեծ մայր, որ Կայան աւանին մէջ ինքզինք միշտ «յաղթական» կը զգայ. «Չենք վախնար, այնքան ատեն որ կ՛ուզենք ապրիլ, որպէսզի թուրքը վախնայ մեզմէ»: Եւ Լենային համար «յաղթանակ»-ի լաւագոյն միջոցը «ապրելուն» մէջ է:

Այս ապրող կեանքն է, որ տեսայ Կայան աւանին մէջ: Սահմանամերձ գիւղը:

Դպրոցին մանուկները, մեր գիտաժողովի երկրորդ օրուան աշխատանքներէն առաջ, կատարեցին ներկայացում մը: Իսկ ներկայացո՞ւմը՝ «Լոյս, սէր եւ կեանք»: Անոնք երգեցին եւ վկայեցին կեանք մը, որուն հիմքերը լոյսն ու սէրն են: Եւ այս արժանիքներով կեանք մըն է, որ անոնք վճռած են ապրիլ, բայց նաեւ վճռած են յաղթել:

Դասախօսութիւններէն ետք քիչ մը քալելով հասայ «Խրամատը». հոն, ուր սահման էր եւ կարելի չէր աւելի առաջ երթալ: Եւ այդ խրամատին մօտ կային ապրող վկայութիւններ: Հոն էր նահատակ քաջամարտիկ Գէորգին յուշարձանը: Ու տակաւին՝ հոն էր նաեւ կիսափլատակ տնակը, որուն մէջ կանգուն կեցած էին Սուսաննան եւ իր զաւակները: Բոլորն ալ տակաւին կ՛ապրին Կայան աւանին մէջ: Եթէ չկան բնակութեան յարմարաւէտ ու բարւոք պայմաններ, բայց կայ ապրելու հոգին: Այն հոգին, որ խառնուած է այդ «Խրամատ»-ին մէջ: Եւ եթէ հայու այս հոգին «Խրամատ»-ին կու տայ ուժ՝ պահելու եւ պահպանելու համար զայն, բայց նաեւ անկէ կ՛առնէ կեանքը ապրելու տեսլականը: Երեւի ա՞յս ալ հայուն «իւրայատկութիւններէն» է: Եւ ինչպէս որ օտար լրագրող մը անցեալ ապրիլի Ղարաբաղի պատերազմը եւ անոր ընդհանուր մթնոլորտը նկարագրելով՝ ըսած էր. «Տարօրինակ է հայը: Խաղաղ օրերուն կը ձգէ իր հայրենիքը, բայց պատերազմի ու ճգնաժամի ատեն կը վերադառնայ ու կը հաւաքուի անոր շուրջ»: Երեւի մեր պատմութի՞ւնն է, եւ այդ պատմութեան ստեղծած հոլովոյթնե՞րը, որոնք հայը վերածած են «ճգնաժամի» ժողովուրդի մը:

Կայան աւանէն դուրս եկանք եւ հասանք Իջեւան: Ճաշարանի մը մէջ մեզի պատրաստած էին ընթրիք: Արմէն Կիրակոսեանը մեր սեղանին սպասարկողն էր: Երիտասարդ հայ մը, որ կ՛ապրի Իջեւանի մէջ: Ճաշի մատակարարումէն ետք Արմէնը արտասանեց Սիամանթոյի «Զաւակը»: Եւ բանաստեղծին հոգին ու միտքը որքան դիպուկ էին այդ մթնոլորտին հետ: Եւ «Զաւակը»: Հայրը գիշերով իր զաւակը կը հասցնէ Միջերկրականի ափերը՝ մաքառելով ահաւոր ալիքներուն դէմ, փրկելով միակ «յոյսը աւերուած իր գիւղին»: Եւ եթէ հայ ժողովուրդին պատմութիւնը մինչեւ այսօր լեցուն է «ալիքներով», սակայն ուրիշ ելք չկայ, բացի «մաքառելէ» անոնց դէմ... Դժուար թէ այլընտրանք մը ըլլայ, հայը պիտի պահէ իր միակ «յոյսը»՝ հայրենի հողը: Եւ Կայան աւանը եւ անոր «Խրամատ»ին կողքին ապրող «սահմանամերձ հայը» ցոյց տուին կեանքը ապրելու եւ շարունակելու այս վճռակամութիւնը: Թէ՝ կարելի է ապրիլ եւ պահել մեր միակ «յոյսը», որքան ալ ատիկա դժուար ըլլայ:

Կայան աւան: «Սահմանամերձ հայը»: Խրամատին ընդմէջէն կեանքը պահելու եւ ապրելու մարտահրաւէրը:

Եւ դարձեալ՝ Սիամանթոն եւ իր «Զաւակը»:

Բանաստեղծը հայ ժողովուրդին հարստութիւնը տեսաւ ազգապահպանումի եւ սերունդներու շարունակականութեան մէջ: Եւ հայը, «սահմանամերձ» թէ այլ, պիտի պահէ այս «հարստութիւնը»: Ազգապահպանումի եւ սերունդներու շարունակականութեան, իմա՝ հայուն հարստութեան ամուր գրաւականը հայրենի հողն է:

Կայան աւան: «Սահմանամերձ հայը»: Ան՝ հայը, վճռած է պահել իր հայրենի հողը: Իր՝ հայուն հարստութիւնը:

❑

ՃՇԴՈՒՄ

"Արձագանգ"ի նախորդ՝ Մարտ-Ապրիլի թիւի՝ 10-րդ էջի, 3-րդ սիւնակի վերեւը սխալմամբ գործածուած է "հոգեհանգիստ" բառը: Նախադասութիւնը պէտք է կարդալ հետեւեալ բովանդակութեամբ.

"...ուր Լառնաքայի հոգեւոր հովիւ Տէր Մաշտոց քահանայ Աշքարեան ի յիշատակ Մեծ Եղեռնի միլիոն ու կէս սրբացած նահատակներուն աղօթք կատարեց":

Շար. Էջ 10-էն Եկաւ, Տեսաւ ...

ծառայ մը եւ մեծ փիլիսոփայ, որ մեր երկիրը հիւր եկաւ կիսելու համար մեզի հետ, մեր յոյսերն ու մտահոգութիւնները:

Մեկ խօսքով, այս համեստ ու անշահախնդիր ուխտաւորին այցելութիւնը պատմական դարձակէտ մը նկատուեցաւ բոլորին կողմէ:

Եւ տակաւին, իր կեցութեան երեք օրերուն ան մեզի սէր եւ հաւատք քարոզեց: Քարոզեց մեղմ ու համոզիչ ձայնով: Յանդարտ եւ նոյնքան ալ՝ տպաւորիչ: Խրատեց իրարու հանդէպ ներողամիտըլլալ: Զիրարսիրել: Յոգեւոր միութիւնը փառաբանեց ու իր պատգամներուն մէջ գիտակցօրէն մեր մեծանուն բանաստեղծ Չարենցէն գերեցիկ տողերէն յիշեց: Նաեւ իբրեւ մեծ ու բարի օրինակ՝ ան յիշեց մեր սուրբերէն Ներսես Շնորհալի հայրապետն ու Գրիգոր Նարեկացին: Ապա կրկին ու կրկին անգամներ օրհնեց մեզ ու մեր երկիրը չմոռնալով նաեւ մեր ապագան: Խաղաղութիւն մաղթեց մեր ազատ ու անկախ հայրենիքին ու անոր կից՝ մեր Ղարաբաղին:

Եւ վերջապէս... պապը եկաւ ու իրեն հետ բերաւ ամբողջ բարի եւ օրինակելի աշխարհ մը:

Ան նաեւ չմոռցաւ մեզի յիշեցնելու՝ յարգել օրէնքի գերակայութիւնը: Խրատեց մեզմէ հեռացնել ամեն ատելութիւն ու նախանձ, ամեն կաշառակերութիւն եւ զրպարտութիւն: Շեշտեց նաեւ, որ դրամը պէտք չէ, որ մեզ կառավարէ: Ծառայասիրութիւն քարոզեց ու երկարօրէն յորդորեց ըլլալ համեստ ու բարի: Յիշեցուց նաեւ, որ այն Աստուածը, զոր մենք կը պաշտենք, խաղաղութեան Աստուածն է: Եւ վերջապէս, չմոռցաւ իր համակրանքը, յարգանքն ու սէրը հրապարակելու Հայկական հարցին եւ մեր ժողովուրդին ու մեր պատմութեան: Ու այս բոլորին յիշատակումով ան եկաւ հաստատելու, թէ հայ ժողովուրդն ալ իր դարաւոր կեանքով մաս կը կազմէր աշխարհի մեծ մշակոյթին:

Ըսի ու կրկնեցի, օրհնեց մեզ եւ մեր ապագան:

Իսկ հիմա... ի՞նչ սորվեցանք իրմէ: Ինչո՞ւ եկաւ պապը: Արդեօ՞ք եկաւ այս բոլորը մեզի յիշեցնելու: Ի՞նչ դասեր, կը կարծեմ, կոցանք քաղել իր «հրամցուցածներէն»: Արդեօ՞ք իսկապէս այս բոլորին կարիքը ունէինք: Արդեօք մոռցա՞ծ էինք, թէ մենք իբրեւ հոգեւորական, իշխանաւոր եւ կամ պարզ քաղաքացի՝ ովքեր ենք, եւ թէ ի՛նչ կամ ինչէ՞ն կ՛ընենք, եւ կամ մեր ներկայ ընթացքով ազգովին ո՞ւր հասած ենք, ո՞ւր «կ՛երթանք» եւ կամ՝ ո՞ւր հասցուցած ենք մեր երկիրը:

Կը կարծեմ, որ ինք մեզի «դասեր» տուաւ՝ միաժամանակ լռելեայն ըսելով «հասկցողին շատ բառեւ»: Բայց ինչո՞ւ եւ ան ալ մեզի՝ ժողովուրդի մը: Ըսէ՛ք, ինչո՞ւ: Չէ՞ որ մենք աշխարհի առաջին քրիստոնեայ երկրի ժողովուրդը ըլլալով՝ այս բոլորը «արդէն գիտենք»: Արդեօ՞ք այս բոլորին կարիքը ունէինք: Արդեօ՞ք ներկայիս աշխարհի ամենէն հաւատացեալ ժողովուրդներէն ենք: Արդեօ՞ք պէտք ունէինք այս բոլոր բարի եւ օգտաշատ թելադրանքներուն:

Իմ կարծիքով... անկասկա՛ծ:

Ու վերջապէս. ի՞նչ սորվեցանք այս բանիմաց եւ ուխտագնաց մեծ հաւատացեալէն, անոր թելադրանքներէն: Շատ հաւանաբար բոլորիս մըտքին եւ հոգիին մէջ իր բոլոր պարզածները ունեցան իրենց որոշ կամ յստակ արձագանգները: Սակայն որքանո՞վ իսկապէս մենք զմեզ ճանչցանք, եւ թէ ինչպէ՞ս մենք զմեզ պիտի կարենանք սրբագրել: Արդեօ՞ք տեսանելի էր, թէ մենք ծուռ եւ կամ ոչ շիտակ ճամբաներու վրայ կը գտնուէինք, որ նման թելադրանքներ ստացանք:

Եւ եթէ այդպէս է, այս բոլորէն ետք արդեօ՞ք քաջութիւնը ունինք կամ պիտի ունենանք մենք զմեզ սրբագրելու:

Չեմ գիտեր:

Իւրաքանչիւր հայ, ըլլայ ան հոգեւորական կամ աշխարհիկ, մեծահարուստ կամ իշխանաւոր կամ պետական դէմք եւ կամ պարզ հայ քաղաքացի, ինքն իր անձին թող հարց տայ:

Ես միայն իմ «արդեօ՞ք»-իս պատասխանը ունիմ:

Արդարակորով Իրաւաբան Ֆէթհիյէ Չէթին Կիպրոսի Մէջ

Երան Գույումճեան

Կիրակի 29 Մայիս, 2016-ի երեկոյեան, կիպրահայութիւնը հոգեշահ առիթը ունեցաւ հանդիպելու՝ «Մեծմայրիկս» գիրքի հեղինակ, իրաւաբան Ֆէթհիյէ Չէթինի հետ, զայն լսելու, մօտէն ծանօթանալու այս արդարատենչ, արդարադատ, ճշմարտախօս անձնաւորութեան, որուն վերոնշեալ գիրքի հրապարակումը մեծ աղմուկ բարձրացուցած էր ատենին եւ մինչեւ հիմա ալ Թուրքիոյ քաղաքացիական հասարակութեան մօտ եւ ընդհանրապէս ալ, թարգմանուելով աւելի քան 12 լեզուներու...

Ձեռնարկը կազմակերպուած էր Կիպրոսի Հայ Դատի Յանձնախումբին կողմէ եւ տեղի ունեցաւ ՀՄԸՄ-ՀԵՄ-ի ակումբի յարկին տակ, հոծ հասարակութեան մը ներկայութեամբ:

Հայ Դատի Յանձնախումբի ատենապետ Պրն. Սիմոն Այնէճեանի բարեգալուստի կարճ խօսքէն ետք, խօսք առաւ օրուան հիւրը՝ Տիկ. Ֆէթհիյէ Չէթին, որուն սրտառուչ խօսքը՝ թրքերէնով, տեղւոյն վրայ եւ նախադասութիւն առ նախադասութիւն կը թարգմանէր պոլսահայ Պրն. Տիգրան Ալթուն:

Իր խօսքի սկզբնաւորութեան, Տիկ. Չէթին յատկանշականօրէն ըսաւ. «Կեանքի մէջ կան անկրկնադարձային պահեր, որոնք մեզ կը յեղաշրջեն այնպէս, որ տուեալ պահէն ետք մենք չենք մնար այն նոյն անձը, զոր էինք այդ պահէն առաջ»: Ան պատմեց թէ ինչպէս իր մօր մայրը, խզելով իր երկար տարիներու լռութիւնը, օր մը իրեն պիտի խոստովանէր իր կեանքի դառնակսկիծ պատմութիւնը, թէ ինչպէս՝ իննը տարեկան հասակին, ան բռնութեամբ պիտի խլուէր իր հարազատներէն, իր հարազատ մօրմէն մասնաւորաբար, եւ մէկ օրէն միւսը իր ինքնութիւնը՝ լեզուն, կրօնքը, անունը պիտի այլափոխուէին յանկարծօրէն... եւ Հրանուշը պիտի դառնար Սեհէր, մինչ իր ազգակիցները պիտի խողխողուէին ու սպաննուէին, կամ պիտի բռնէին աքսորի մահաբեր ճամբաները...

Այսպէս, Հրանուշ պիտի խլամանար, նոր ընտանիք մը, նոր անուն մը, նոր ինքնութիւն մը պիտի պարտադրուէին իրեն, պիտի խօսէր ստիպողաբար այն լեզուն, զոր կը խօսէին՝ նոյն իր ազգակիցները անպատմելի խոշտանգումներու ենթարկող մարդիկ...: Տիկ. Չէթին այնքան սրտայոյզ կերպով նկարագրեց թէ ինչպէս իր մեծմայրիկը իր հոգեցունց պատմութիւնը կ'ընդհատէր երկար լռութիւններով, մերթ առաստաղին նայելով, մերթ ալ իր աջ ձեռքով շփելով իր աջ սրունքը, կարծես փորձելով յիշել որոշ մանրամասնութիւններ, կամ վերապրելով այդ դաժան օրերու անպատմելի տառապանքը... Ո՞վ գիտէ...

Իր մեծմօր՝ Սեհէր դարձած Հրանուշի պատմածները խոր ազդեցութիւն պիտի գործէին Ֆէթհիյէ Չէթինի վրայ, ինչպէս ներկաներուն անչափ սրտառուչ կերպով յայտնեց ան, նշելով իր ապրած հոգեկան խոր տագնապը, իր ներաշխարհը տակնուվրայ ընող մղձաւանջային ապրումները... Վերջապէս ան կ'որոշէր գիրքով մը պատմել ու հրապարակել իր մեծմօր կեանքի ողբերգութիւնը, հոգեկան խոր ցնցումներով լի կենսագրութիւնը, գուցէ արդարութիւն ընելու անոր եւ անոր նմաններուն, որոնց զլացուեցաւ նոյնիսկ իրենց պատմութիւնը բարձրաձայնելու իրաւունքը եւ միաժամանակ ձերբազատուելու համար այն խոր մղձաւանջէն, որ իրեն հանգիստ չէր տար քուն թէ արթուն...



«Գրող չէի», ըսաւ ան, «բայց երբ սկսայ գրել, սկզբնական դժուարութենէ մը ետք, հետզհետէ էջերը լեցուեցան ինքնաբերաբար եւ հեզասահ», իսկ գիրքի հրատարակութենէն ետք, յարգելի հեղինակը խոստովանեցաւ թէ ինք տեսակ մը խաղաղեցաւ եւ իր անքուն գիշերները որոշ չափով հանգիստ գտան...

Գիրքը, շեշտեց ան, մեծ ներգործութիւն ունեցաւ Թուրքիոյ քաղաքացիական հանրութեան մօտ: Այնուհետեւ, շատեր իրեն հետ կապ կը պահէին՝ հեռաձայնով թէ այլապէս, յայտնելով որ իրենք ալ ունէին նոյնանման փորձառութիւն, որ իր մեծմայրը իրենց ալ մեծմայրն էր: Սփինակագիրներ թերթերու մէջ կը հրապարակէին գրութիւններ՝ «Քու մեծմայրդ մեր ալ մեծմայրն է» վերտառութեամբ...

Իր խօսքին յաջորդող հարցում-պատասխանի բաժինին մէջ, Տիկ. Չէթին յայտնեց որ յետեղեռնեան երրորդ սերունդը սկսած է արթննալ, հարցադրումներ ընել՝ իր անցեալին եւ անոր յարակից հարցերուն մասին, թէպէտեւ պետական ժխտողականութեան քաղաքականութիւնը, շատ փոքրիկ տեղաշարժերով, նոյնը կը մնայ տակաւին, Ցեղասպանութենէն հարիւր տարի ետք ալ: Ան ընդգծեց նաեւ այն կարեւոր հանգամանքը, որ առաջին սերունդը լուռ էր, քանզի յանցակից էր հայաջինջ խժդժութեանց՝ կամ իր անմիջական մասնակցութեամբ, կամ ալ իր լուռ եւ անտարբեր ականատեսի հանգամանքով, իսկ երկրորդ սերունդը, մեծաւ մասամբ, իւրացուցած ըլլալով հայերուն ունեցուածքը, կը վախնար այդ մասին խօսելէ, իր ունեցուածքը չվտանգելու դիտաւորութեամբ...

Ֆէթհիյէ Չէթին կարեւորութեամբ շեշտեց որ ճշմարտութիւնը ճանչնալու հոսանքը սկսած է շարժիլ եւ, վաղ թէ ուշ, անիկա իր բարերար արդիւնքը պիտի տայ, քանզի երբ գետը սկսի վազել, կարելի չըլլար խափանել անոր ընթացքը, ըսաւ ան, աւելցնելով որ ինք մեծ յոյս ու հաւատք ունի որ իր կեանքին ընթացքին՝ ականատեսը պիտի ըլլայ Թուրքիոյ Ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանչնալու մեծ իրադարձութեան:

Գնահատելի ձեռնարկ մը՝ արդարեւ, մօտէն շփուելու Ֆէթհիյէ Չէթինի նման արդարակորով անձնաւորութեան մը հետ, որ հայոց Ցեղասպանութեան փաստին կը նայի շեշտակի, առանց որեւէ բան թաքցնելու, ամբողջական ճշմարտախօսութեամբ եւ համարձակախօսութեամբ, այլեւ իր մորթին վրայ զգացած ըլլալով՝ խլամացած, բռնի դաւանափոխ եղած հարիւր հազարաւոր հայերու ինքնութեան խոր տագնապը, խեղուած ճակատագիրը, ինչպէս եղաւ պարագան իր սիրելի մեծմայրիկին՝ Սեհէր դարձած Հրանուշին...

«Ազատ Խօսք»

Ճիշդ ասոր համար է, որ մեծապէս շնորհակալ ու միաժամանակ երախտապարտ եմ Վատիկանի գահակալէն, իր այցելութեան առթիւ կատարած յորդորներուն եւ էական, ազդեցիկ ու կարեւոր յիշեցումներուն համար:

Երանի՜ նման հիւր այցելուներ միշտ ունենանք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 98-ԱՄԵԱԿԻ ՓԱՌԱՅԵՂ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Մայիս 27-ի երեկոյեան, Նիկոսիոյ ՀՄԸՄ-ՀԵՄի մարզադաշտին վրայ, ներկայութեամբ կիպրահայ համայնքի պետական ներկայացուցիչին, Ազգային Իշխանութեան եւ համայնքի քաղաքական կուսակցութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներուն, փառայեղ կերպով տօնախմբուեցաւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան անկախութեան 98-ամեակը:

Օրուայ բանախօսն էր Յունաստանէն յատկապէս հրաւիրուած, ՀՕՄ-ի շրջանային վարչութեան անդամ Նորա Քիւրտողլեան, իսկ պատուոյ հիւր՝ Հրանդ Տինքի փաստաբան եւ «Մեծմայրս» գիրքի յեղինակ՝ պոլսաբնակ, եւ վերջերս իր հայկական արմատները յայտնաբերած՝ Ֆէթհիէ Չէթին:

Յայտագրի գեղարուեստական բաժնին, տողանցքով, ասմունքով, երգերով եւ պարերով, իրենց մասնակցութիւնը բերին ՀՄԸՄ-ՀԵՄ-ի սկաուտները, ՀՅԴ Պատանեկան Միութիւնը, եւ Համազգայինի «Սիփան» պարախումբը, ինչպէս նաեւ՝ պատանի Մարի Սոմաքեան Եորղիու:

Բացման խօսքով ելոյթ ունեցաւ Վարդուկ Սարգսեան, ՀՅԴ Կիպրոսի Կոմիտէի խօսքը փոխանցեց Կոմիտէի Ներկայացուցիչ Սիմոն Այնէճեան, իսկ փակման խօսք կատարեց՝ Լառնաքայի Հայ Ակումբի վարչութեան անունով՝ Թալին Պապիկեան-Անկելիտու:

Հանդիսութեան յաջորդեց աւանդական ճաշկերոյթ-խրախճանք ՀՄԸՄ-ՀԵՄ ակումբի յարկին տակ, որու ընթացքին, խանդավառ մթնոլորտի մէջ, ազգային-յեղափոխական երգերով ելոյթ ունեցաւ Յովիկ Մանուշեան, Հայկ Մահտեսեանի ընկերակցութեամբ:

Հանդիսութեան պատուոյ հիւրն էր
ՖԷԹՀԻԷ ՉԷԹԻՆ

ԸՆԿ. ՍԻՄՈՆ ԱՅՆԷՃԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Համազգայինի Կիպրոսի Օշական մասնաճիւղի Սիփան պարախումբի այս տարուայ տարեկան պարի ելոյթի խորագիրն էր ՆԵՄԵՍԻՍ:

Կիպրոսի Օշական մասնաճիւղի տղաքը ներկայացուցին Հ.Յ. Դաշնակցութեան կազմակերպած պատժական գործողութիւնը, որ հայկական ցեղասպանութիւնը կազմակերպող հիթլերներուն բախտը որոշեց, մէկը միւսին ետեւէն գնդակահարելով զանոնք:

Անցեալ տարի Կիպրոսի Համազգայինը, 100-ամեակի ծիրէն ներս, ներկայացուց «Ոտքի՛ Դատարանն է Գալիս» Սողոմոն Թեհլիրեանի դատավարութիւնը, որու աւարտին, ան ազատ կ՛արձակուէր գերմանական դատարանին կողմէ:

Դաշնակցութեան կողմէ ընտրուած անունը՝ ՆԵՄԵՍԻՍ, պատահական չէր:

Յունական mythologyի մէջ Նեմեսիս, արդարահատուցման չաստուածուհին էր, որուն՝ երբ մեզի նման մահկանացուներ կը դիմէին, ինք, տիեզերական միջամտութեամբ, կը դատէր կացութիւնը եւ կը վերահաստատէր արդարութիւնը:

600 տարի երկարող, Օսմանեան կայսրութեան բռնապետութենէն ետք, երեք տասնամեակ երկարող Ցեղասպանութենէն ետք, հայ ժողովուրդը, ՆԵՄԵՍԻՍ չաստուածուհիին միջամտութեան փութաց:

Կարեւոր չէ եթէ կը հաւատանք տիեզերական միջամտութիւններու:

Կարեւոր չէ եթէ կը հաւատանք ՆԵՄԵՍԻՍ չաստուածուհիին:

Կարեւորը այն է, իրողութիւնը այն է, թէ աւելի քան 100 տարի է որ մեր ժողովուրդի կարեւորագոյն պահերու ընթացքին, ուժ մը կը սաւառնի մեր հետ, գնացքը պահպանելով եւ յաղթանակներ ապահովելով ժողովուրդի մը համար, որ Օսմանեան կայսրութեան բանտերու յետին, դատապարտուած էր ազգային եւ ֆիզիքական բնաջնջումի:

Հակառակ բազմազան ու բազմամակարդակ դժուարութիւններու, այդ մութէն դուրս գալու եւ կրկին կազմաւորուելու փորձը - որ կը կատարենք ազգովին - դեր կը շարունակուի... վկայ մեր պատմութիւնը:

Այդ պահէն որ մենք արդարութեան չաստուածուհիին դիմեցինք, ան միշտ մեր կողքին եղած է, Պերլինի փողոցներէն դէպի Սարդարապատ, Ղարաքիլիսէէն Բաշ Ապարան, սփիւռքի կազմաւորումէն դէպի լռութեան պատը փշրող ցուցական մեր պայքարը, Սովետական կարգերէն դէպի նոր անկախացում, Արցախի ազգային ազատագրական պայքարէն, դէպի կեանք ստացած Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը ու դեռ անցեալ ամիս, ան մեր զինուորին կողքին էր, երբ թշնամին կրկին իր անփոյթ ու անյաջող ծրագիրները կը փորձեր ի գործ դնել, Արցախեան ճակատին վրայ:

Նոյն այս ոգիով կ՛ապրին բոլոր մեր օճախները, կ՛ապրինք նաեւ մենք Կիպրոսի մէջ, փորձելով յաղթահարել բոլոր դժուարութիւնները, պահելու լեզու եւ մշակոյթ, ազգային եւ կարեւորագոյնը՝ մարդկային արժէքներ, երիտասարդական ու պատանեկան կեանք, հայ մամուլ, հայեցի կրթութիւն.... ու կարեւորագոյնը.... միասնական խօսք ու գործ եւ միակամ կեցուածք, մեր ազգը ու գաղութը յուզող բոլոր հարցերուն կապակցութեամբ:

Այս առթիւ կ'ողջունեմ ներկայութիւնը Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կիպրոսի ներկայացուցիչներուն, որոնց հետ միասնաբար մի քանի շաբաթ առաջ, Արցախի զօրակցական հաւաք մը կազմակերպեցինք, կրկին դրկելով այդ պատգամը ամենուրէք՝ որ ազգային մեր խնդիրներուն առջեւ, մեզ ոչինչ կը բաժնէ:

Կ'ողջունեմ ներկայութիւնը մեր այսօրուայ բանախօս ընկերուհի Նորա Քիւրտողլեանին եւ իր կողակիցին՝ Յունաստանի ՀՅԴ Կեդրոնական Կոմիտէի անդամ ընկեր Սերգօ Գույումճեանին: Սփիւռքի պայմանները ակամայ կը բաժնեն մեզ, սակայն միասին ապրած ենք ու կապրինք մեր ընտրած ծառայութեան ու յաղթանակի ճամբան:

Յաղթանակներու շարքին յարմար առիթ է նաեւ, միասնաբար ողջունելու վերընտրութիւնը մեր Պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանին, որ այս տարի մեզ "զրկեց" այս մարզադաշտին վրայ յաղթանակի խրախճանք կազմակերպելէ:

Ինք աւելիով արդարացուցած է տարիներ առաջ առած մեր որոշումը, զինք քաղաքական բեմի վրայ տեսնելու, եւ իրաւամբ գաղութի վստահութեան քուէն՝ ան վերածած է, Կիպրահայ գաղութի գերազանց աշխատանքի: Հ.Յ. Դաշնակցութեան Կիպրոսի Կոմիտէի անունով, իրեն կը մաղթենք առաւել ուժ եւ կորով:

Վերջապէս կ'ողջունեմ ներկայութիւնը մեր այսօրուայ պատուոյ հիւրին՝ Ֆեթհիյէ Չեթինին:

Տիկին Չէթին,

Մեր արդարութեան չաստուածուհին կ՛ուզենք կիսել ձեր հետ:

Որպէսզի ձեր աշխատանքը բացայայտէ, Հրանդ Տինքի սպանութեան մութ ծալքերը:

Որպէսզի տուն գան ձեր նման կորած բոլոր հայերը:

Որպէսզի արդարութիւնը փայլի վաղուայ նոր Թուրքիոյ մէջ, ուր ճշմարտութիւնը պիտի գերիշխէ:

Ուր Հայութեան եւ այլ փոքրամասնութիւններու իրաւունքները ոտնակոխ պիտի չըլլան:

Ուր Սարդարապատեան զանգերու ղօղանջներուն նման, պիտի ղօղանջեն նաեւ զանգակատուները՝ Թուրքիոյ մէջ գտնուող հայկական բոլոր եկեղեցիներուն:

ՖԵԹՀԻԷ ՉԵԹԻՆ ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ

Նիկոսիոյ ՀՄԸՄ-ՀԵՄ ակումբի սրահին մէջ, տեղի ունեցաւ Հրանդ Տինքի սպաննութեան դատավարութեան փաստաբան Ֆէթհիէ Չէթինի յեղինակած «Իմ Մեծմայրս» գիրքի ներկայացումը, կազմակերպութեամբ Կիպրոսի Հայ Դատի Յանձնախումբի եւ գործակցութեամբ՝ Ռութ Քէշիշեանի «Մուֆլոն» գրատունին:

Ձեռնարկի լեզուն թրքերէնն էր եւ ձեռնարկի տեւողութեան ընթացքին, տեղի կ՚ունենար հայերէնի զուգահեռ թարգմանութիւն, պոլսահայ Տիգրան Ալթունին կողմէ, որ յատկապէս այս նպատակով հրաւիրուած էր Կիպրոս:

100-է աւելի հաշուող՝ հետաքրքիր բազմութեան մը ներկայութեան, ծայրէ ի ծայր լեցուած սրահի մը մէջ, Ֆէթհիէ Չէթին մէկուկէս ժամէ աւելի տեւող մանրամասն բացատրութիւններ տուաւ իր կեանքին եւ ընտանիքին մասին, մատնանշելով թէ որո՞նք էին՝ «Իմ Մեծմայրս» գիրքը գրելուն տուն տուող պատճառները:

Ան բացատրեց, թէ այս գիրքի հրատարակութենէն ետք, շատ բաներ փոխուած են Թուրքիոյ մէջ եւ թէ այս հարցին մէջ, ետ-դարձ չկայ: Ան աւելցուց նաեւ, թէ Թուրքիոյ տարածքին կատարած իր այցելութիւններուն ընթացքին, ան կը ստանայ ջերմ ընդունելութիւն եւ շատեր կը խոստովանին, թէ իրենց մեծմայրերն ալ հայ եղած են: Իր խօսքի աւարտին, ան ստանձնեց պայքարիլ, մինչեւ որ Թուրքիա պաշտօնապէս ճանչնայ Հայոց Ցեղասպանութիւնը: Յաջորդեց հարցումներու շարան մը, որու աւարտին, ներկաները շարունակեցին Ֆէթհիէ Չէթինին հետ իրենց զրոյցը, մտերմիկ մթնոլորտի մը մէջ:

Ներկաները առիթը ունեցան նաեւ ապահովելու Չէթինի գիրքէն օրինակներ, մակագրուած յեղինակին կողմէ: 13 լեզուներու թարգմանուած այս գիրքէն օրինակ մը ապահովել փափաքողները կրնան դիմել «Մուֆլոն» գրատուն:

ՖԷԹՀԻԷ ՉԷԹԻՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐՔ ԿԻՊՐԱՑԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐՈՒ ՀԵՏ

Կիպրոս իր կեցութեան ընթացքին, Կիպրոսի Հայ Դատի Յանձնախումբի նախաձեռնութեամբ, Ֆէթհիէ Չէթին առիթ ունեցաւ հանդիպելու թուրք կիպրացի թղթակիցներու հետ:

“Sim TV” հեռատեսիլի կայանէն ան 55 վայրկեան տեւող հարցազրոյց մը ունեցաւ (https://www.youtube.com/watch?v=9b45Kp8EuPY) Հայկական Ցեղասպանութեան ճանաչման, պոլսահայերու կեանքին, Իսլամացած հայերու եւ իր՝ «Մեծմայրս» գիրքին մասին:

Ան հարզազրոյց մը տուաւ նաեւ «Ատրէս Քըպրըս» թերթին, որու անցեալ ամսուայ թիւին գըլխաւոր յօդուածը եւ կողքի նկարը իրն էին:

ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԱՆՈՒՆՈՎ ՍԻՄՈՆ ԱՅՆԷՃԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ

Ուղղուած՝ Seyfert Associate Press թուրք-կիպրական լրատու գործակալութեան

Թուրքիոյ նախագահի ելոյթէն միայն մի քանի օր ետք, թէ Գերմանիա վերջին երկիրը պիտի ըլլար, որ պիտի ճանչնար Հայկական Ցեղասպանութիւնը, Թայիփ Էրտողանի կատարած՝ աննպատակ յայտարարութիւնները արդէն հերքուած են:

Չեխիայի նախագահի ելոյթով, կը հունալորուի Չեխիայի Խորհրդարանին կողմէ՝ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման գործընթացը: Կը վստահեցնեմ որ շատ շուտով, յառաջ պիտի գան նաեւ այլ երկիրներ:

Բարեփոխուող Թուրքիոյ մէջ, ուր կը բազմանան ձայները, դէպի աւելի ժողովրդավար եւ աւելի արդար ընկերութիւն մը, ժամանակի հարց է նաեւ՝ նոյն ինքն Թուրքիոյ կողմէ, Հայկական Ցեղասպանութեան ճանաչումը:

Թէեւ չենք տեսներ որ այսպիսի բան մը կրնայ պատահիլ այսօրուայ նման վարչակարգի մը մէջ, ուր «դրացիներու հետ զերօ հակամարտութիւններու դաւանանքը» լրիւ հակադարձած է, կը հաւատանք որ տարբեր Թուրքիա մը պիտի վերահաստատէ իր ցաւալի անցեալը եւ պիտի վերածուի արդար պետութեան մը, ուր ֆաշիզմը պիտի վերնայ ինչպէս նաեւ՝ խօսքի արտայայտութեան դէմ բանեցուող ճնշումը եւ պիտի վերահաստատուին երկրին մէջ բնակող ժողովուրդներուն իրաւունքները:

Թուրք քաղաքացիներու հանդէպ ատելութեան զգացումներ չունինք, ո՛չ ալ՝ նախագահ Էրտողանին: Ընդհակառակը, դէմ ենք բոլոր անոնց, որոնք կ՛ականահարեն Հայաստանի եւ Թուրքիոյ յարաբերութիւնները: Ամէն օր կը հանդիպինք եւ կը լսենք Թուրքիա բնակող անհատներու մասին, որոնք մեզի պէս - Հայկական Ցեղասպանութեան վերապրողները – կ՛երազեն Թուրքիոյ մը մասին, ուր պիտի ապահովուին ազգային եւ ընկերային իրաւունքները:

Նախագահ Էրտողան պարզապէս կորսընցուցած է իր ճամբան: Ո՞րն է ապացոյցը. Բազմաթիւ քաղաքական, ընկերային եւ զինւորական հակամարտութիւնները, որոնք շարունակ կը մէկուսացնեն զինք: Գերմանիոյ Խորհրդարանի վերջին ճանաչումով, ինչպէս նաեւ անոր յաջորդելիք այլ՝ ազդեցիկ երկիրներու ճանաչումով, Թուրքիա այժմ մէկուսացած է նաեւ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման հարցով, որու հետեւանքները առընչուած են պատմական իրականութեան վերահաստատման, Ցեղասպանութեան վերապրողներու վնասուց հատուցման եւ Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ՝ խաղաղութեան ընդհանուր ուղիին հետ:

ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ 24-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ ԱՐՑԱԽԻ ԶՕՐԱԿՑԱԿԱՆ ՀԱՒԱՔ



Կազմակերպութեամբ հայկական երեք քաղաքական կուսակցութիւններու՝ Սոցեալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կիպրոսի գործադիր մարմիններուն, Նարեկ Ազգային Վարժարանի հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ Արցախի Զօրակցական Հաւաք, Շուշիի Ազատագրութեան 24-ամեակին առթիւ:

Յաջորդեց վաւերագրական վիտէօերիզի ցուցադրութիւն, Շուշիի ազատագրութեան համար մղուած պատերազմին մասին:

Օրուայ բանախօսն էր ՌԱԿ-ի Կիպրոսի ղեկավար Ասատուր Տէվլեթեան, որ հակիրճ եւ պատշաճ կերպով փոխանցեց օրուան պատգամը, կիպրահայ համայնքի անունով զօրակցութեան ձայն բարձրացնելով Արցախի մէջ մարտնչող հայ զինուորներուն:

Գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին Համազգայինի «Սիփան», ինչպէս նաեւ՝ պատանեկան «Նանոր» պարախումբերը եւ Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ պատանեկան երգչախումբը, ազգային-յեղափոխական երգերով: Ձեռնարկի աւարտին զօրակցական խօսքով ելոյթ ունեցաւ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը ներկայացնող՝ Յարութ Տէր Պետրոսեան: Իր խօսքի աւարտին ան կոչ ուղղեց ներկաներուն, որ իրենց սրտաբուխ նուիրատուութիւնները կատարեն Արցախի Ֆոնտին:

Ներկայ էին Կիպրահայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Տէր Նարեկ Արքեպիսկոպոս, Նիկոսիոյ եւ Լառնագայի Հոգեւոր Հովիւներ՝ Տէր Մոմիկ Հապէշեան եւ Տէր Մաշտոց Աշգարեան քահանայ հայրերը, Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան, ինչպէս նաեւ՝ համայնքային կառոյցներու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Բացման խօսքով ելոյթ ունեցաւ ՍԴՀԿ-ը ներկայացնող՝ Մանուկ Եըլտըզեան, որ ներկաները հրաւիրեց 1 վայրկեան լռութեամբ յարգել Արցախի առաջնագիծին վրայ՝ վերջերս զոհուած հայ զինուորներուն յիշատակը:

Արցախի զօրակցական հաւաքը վերջ գտաւ Կաթողիկոսական Փոխանորդ Նարեկ Արքեպիսկոպոսի եզրափակիչ խօսքերով եւ պահպանիչով:

ԴԵՍՊԱՆ ԳԱԳԻԿ ՂԱԼԱՉԵԱՆ ՀՐԱԺԵՇՏ Կ՛ԱՌՆԷ

Չորեգշաբթի, Յունիս 15, 2016-ին, Կիպրոսի եւ Յունաստանի մօտ՝ Հայաստանի Հանրապետութեան Դեսպան Գագիկ Ղալաչեան ժամանեց Կիպրոս եռօրեայ այցելութեան համար, հրաժեշտ առնելու իր պաշտօնավարութեան աւարտին:

Դեսպանը Պետ. Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի ընկերակցութեամբ, այցելեց Հանրապետութեան նախագահ Նիկոս Անաստասիատիսին, Խորհրդարանի նախագահ Տի-միթրիս Սիլլուրիսին, ինչպէս նաեւ՝ Արտաքին Գործոց նախարար Եաննակիս Կասուլիտիսին:

ՎԱՐԴԳԷՍ ՄԱՀՏԵՍԵԱՆ ՈՂՋՈՒՆԵՑ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հինգշաբթի 23 Յունիս 2016-ին Կիպրոսի Խորհըրդարանի լիագումար նիստի ընթացքին, Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան ողջունեց Գերմանական Խորհրդարանի որոշումը՝ ճանչնալու Հայկական Ցեղասպանութիւնը:

«ՆԵՄԵ*ՍԻՍ*» ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ՍԻՓԱՆ» ՊԱՐԱԽՈՒՄԲԻ ԲԱՐՁՐԱՐՈՒԵՍՏ ԵԼՈՅԹԸ

Համազգայինի Կիպրոսի «Սիփան» պարախումբի եւ մանկա-պատանեկան «Նանօր» պարախումբի ելոյթը այս տարի տեղի ունեցաւ 7 Մայիս 2016-ին Ստրովոլոսի քաղաքապետարանի հանդիսասրահին մէջ, արժանանալով սրահը ծայրէ-ծայր լեցուցած աւելի քան 800 հանդիսատեսներու հիացումին:

Ձեռնարկը կը վայելէր Կրթութեան եւ Մշակոյթի նախարար Կոստաս Կատիսի եւ հայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի հովանաւորութիւնը: Հրաւիրեալներու շարքին էին Միացեալ Նահանգներու եւ Ռուսիոյ, ինչպէս նաեւ տասնեակ մը այլ երկիրներու դեսպանները, երեսփոխաններ, կուսակցութիւններու ներկայացուցիչներ, պետական բարձրաստիճան պաշտօնատարներ եւ մշակութային կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Վարչութեան ատենապետ Արթօ Դաւիթեանի բացման խօսքէն ու նախարար Կատիսի ողջոյնի խօսքի ընթերցումէն ետք, բեմը բացուեցաւ ու հանդիսատեսներուն առջեւ պարզուեցաւ Նեմրութի հին աստուածներու աւերակ արձանախումբը ներկայացնող լայնատարած պաստառ մը, որուն առջեւ ընթացք առաւ «ՆԵՄԵ*ՍԻՍ*» բնաբանով յայտագրի գործադրութիւնը, պարուսոյց Գօգօ Քէլէշեանի գեղարուեստական ղեկավարութեամբ:

«Սիփան» պարախումբը գեղեցկօրէն կատարեց *«Իշխանապար»*, *«Վաղարշապատ»*, *«Սպանական»*, *«Լեզկինքա»*, *«Շիրակի Տղաներ»*, *«Տալիղ»*, *«Քամանչա»* եւ *«Գիւմրեցիք»* պարերը, արժանանալով ներկաներու ջերմ գնահատանքին: Յատկապէս ողջունելի էր «Սպանական» պարի՝ սպանուհիներու եւ հայուհիներու փոխնիփոխ երեւումը, որ արուեստի գեղեցիկ պահեր ստեղծեց, շնորհիւ պարուսոյց Գօգօ Քէլէշեանի մտայղացումին:

«Նանօր» մանկա-պատանեկան պարախումբը խանդավառութեամբ ներկայացուց «Պարերու Շարան», «Ծաղկած Բալենի», «Հունգարական», «Տօնական» եւ «Ծափ-պար» պարերը, երկարատեւ ծափահարութիւններ խլելով հանդիսատեսներէն:

Երեկոն փակուեցաւ «ՆԵՄԵՍԻՍ» թեմայի ներկայացումով, որ պարարուեստի զգայացունց նմոյշ մը ըլլալէ զատ, «ՍԻՍ» վանկի շեշտադրումով կը խորհրդանշէր նաեւ Արեւմտահայաստանին վերատիրանալու գաղափարը: Տեսարանը բացուեցաւ գիւղական կնունքի մը խրախճանքով, որ յանկարծ կ՛ընդմիջուի ջարդով ու սարսափով: Կ՛երեւի ջարդարար ճիւաղը, որ կը հրճուի այս տեսարանով. քիչ ետք կ՛երեւի հայոց հայրապետը, որ եկեղեցական սպասները հաւաքելով ստիպուած կը հեռանայ Սիսէն: Սակայն շուտով տարագիր հայ զաւակներ կը լուծեն ազգին վրէժը՝ գետին փռելով մարդասպանը ու միանգամընդմիշտ լռեցնելով անոր հիւանդագին քրքիջը: Վերջին տեսարանը կը ներկայացնէր վրիժառուներուն պարը, որ վերջ գտաւ ներկաներուն որոտընդոստ ծափահարութիւններով:

Խուռներամ բազմութիւնը սրահէն մեկնեցաւ հայկական արուեստի հոյակապ երեկոյ մը վայելած ըլլալու արդար գոհունակութեամբ: Ակնյայտ էր պարախումբի մակարդակի բարելաւումը շնորհիւ պարուսոյց Գօգօ Քէլէշեանի անխոնջ ճիգերուն, ակնյայտ էր մանաւանդ՝ պարախումբերու անդամներուն, մեծ ու փոքր, սէրն ու համակրանքը անոր հանդէպ:

Կիրակի, Յունիս 5-ին նոյն յայտագիրը գործադրուեցաւ Լիմասոլի Լանիտիոն Կիմնազիումի սրահին մէջ, խանդավառելով այդ քաղաքի փոքրաթիւ հայ համայնքը: Այս անգամ սակայն յայտագրի վերջաւորութեան ելոյթ ունեցաւ նաեւ Համազգայինի Պաֆոսի «Անի» պարախումբը, որ վերջերս կազմուեցաւ Պաֆոսի մէջ, մեծ գոհողութիւններով եւ աշխատանքով:

Համազգայինի Կիպրոսի «Օշական» մասնաճիւղի «Սիփան» ու «Անի» պարախումբերը, ինչպէս նաեւ մանկա-պատանեկան «Նանօր» պարախումբը, լուրջ դերակատարութիւն ստանձնած են մեր գաղութի նոր սերունդի հայապահպանութեան օրէ օր դժուարացող գործին մէջ: Համազգայինի այս յանձնառութիւնն ու նաեւ մշակութային միւս նախաձեռնութիւնները պէտք է արժանանան բոլորի անվերապահ քաջալերանքին ու աջակցութեան:





ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԿԻՊՐՈՍԻ «ՕՇԱԿԱՆ» ՄԱՍՆԱՃԻՒՂԻ 17-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Համազգայինի Կիպրոսի «Օշական» Մասնաճիւղի 17-րդ Տարեկան Ընդհանուր Ժողովը տեղի ունեցաւ Ուրբաթ, 1 Յուլիս 2016-ին ՀՄԸՄ-ՀԵՄ-ի ակումբին մէջ, Համազգայինի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ ընկ. Վաչէ Փափազեանի մասնակցութեամբ:

Քննելէ ետք նախորդ տարուան գործունէութիւնը, Ընդհանուր Ժողովը գտաւ որ շրջանաւարտ Վարչութիւնը արդիւնաւոր աշխատանք տարած է մասնաճիւղի գործունէութեան բոլոր ոլորտներուն մէջ, յատկապէս «Սիփան» Պարախումբի եւ Պաֆոսի համայնքին մէջ աշխատանք տանելու կապակցութեամբ եւ այս գործունէութիւնը աւելի ընդլայնելու եւ դէպի երիտասարդութիւնը բացուելու առաջադրանքով առաւ համապատասխան որոշումներ:

Ժողովի վերջաւորութեան միաձայնութեամբ վերընտրուեցաւ վարչութեան նոյն կազմը, բաղկացած հետեւեալ ընկերներէն. Արթօ Դաւիթեան (Ատենապետ), Լորա Մկրտիչեան (Քարտուղար), Օհան Ուզունեան (Գանձապահ), Յաբէթ Թուլումճեան եւ Ռոման Սերտեան:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵԿՈՅ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ



Հինգշաբթի, 12 Մայիսին Համազգայինը հաճոյքը ունեցաւ հիւրընկալելու «Յուշամատեան»ի աշխատակից Շողեր Մարկոսեանը, որ ներկայացուց այդ ծրագրի գործունէութիւնը: Ներկաները մեծ հետաքըրքրութեամբ ունկնդրելէ ետք զինք, բազմաթիւ հարցումներ ուղղեցին ու խոստացան գործնապէս մասնակցիլ ծրագրին:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՊԱՖՈՍԻ «ԱՆԻ» ՊԱՐԱԽՈՒՄԲԸ

Համազգայինի Պաֆոսի “ԱՆԻ” նորակազմ պարախումբը իր առաջին ելոյթը ունեցաւ Կիրակի, 5 Յունիսին Լիմասոլի մէջ, մաս առնելով “Սիփան” ու “Նանօր” պարախումբերու յայտագրին մէջ:

Յարատեւ աշխատանք եւ նորանոր յաջողութիւններ կը մաղթենք Պաֆոսի մեր սիրելի պատանիներուն:

ՀՕՄ-Ի ԿԻՊՐՈՍԻ «ՍՕՍԷ»ՄԱՍՆԱՃԻՒՂԻ 28-ՐԴ ԸՆԴ. ԺՈՂՈՎԸ

ՀՕՄ-ի Կիպրոսի «Սօսէ» Մասնաճիւղի 28-րդ Ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 9 Յունիս 2016-ին, ՀՄԸՄ-ՀԵՄ-ի ակումբին մէջ:

Քննելով նախորդ տարեշրջանի գործունէութիւնը, Ընդհանուր Ժողովը գնահատանքով անդրադարձաւ տարուած աշխատանքին, որուն շնորհիւ կատարուած են կարեւոր յատկացումներ թէ՛ ՀՕՄ-ի համահայկական ու հայրենական ծրագիրներուն եւ թէ ներ-համայնքային կառոյցներու եւ ծրագիրներու: Յատկապէս գնահատուեցաւ ՀՕՄ-ի Ստեփանակերտի «Սօսէ» մանկապարտէզի շինութեան ֆոնտին ի նպաստ վարչութեան գոյացուցած 5000 ամերիկեան տոլարը, ինչպէս նաեւ անհատ նուիրատուներէ ստացուած 4200 ամերիկեան տոլարի յաւելեալ գումարը:

Ժողովի վերջաւորութեան տեղի ունեցաւ վարչութեան երեք ընկերուհիներու լրացուցիչ ընտրութիւնը, որով վարչութեան նոր կազմը մնաց անփոփոխ, բաղկացած հետեւեալ ընկերուհիներէն.

Վերա Դաւիթեան (Ատենապետ), Եւա Այնէճեան (Փոխ ատենապետ), Մէյպըլ Պայրաքտարեան (Քարտուղար), Աստղիկ Թաքըլճեան (Գանձապահ), Ալիս Թերզեան(Խորհրդական):

❏

ՀՕՄ-Ի ԿԻՊՐՈՍԻ «ՍՕՍԷ» ՄԱՍՆԱՃԻՒՂ

Դրամահաւաք՝
Ի նպաստ Ստեփանակերտի «Սօսէ» Մանկապարտէզի շինութեան ֆոնտի «Ծառ»ին

Ստորեւ կը ներկայացնենք Կիպրոսի նուիրատուներու ամբողջական ցանկը

ՀՕՄ-ի «Սօսէ» մասնաճիւղ՝ 1 արմատ	$5.000
Մկրտիչ, Յասմիկ Գույումճեան՝ 3 տերեւ	600
Ռոպերթ, Թալիա Պայրամեան՝ 2 տերեւ	400
Արամ Պաղճեան՝ 2 տերեւ	400
Արամ Դաւիթեան՝ 2 տերեւ	400
Մարի-Լուիզ Գույումճեան եւ Բանայոտիս Մէիվածիս՝ 2 տերեւ	400
Արթօ, Վերա Դաւիթեան՝ 1 տերեւ	200
Մարալ Այնէճեան՝ 1 տերեւ	200
Սօսի Թորոսեան՝ 1 տերեւ	200
Ալիս Դաւիթեան՝ 1 տերեւ	200
Ազնիւ Եաննոպուլոս՝ 1 տերեւ	200
Թագուհի Թաստարեան՝ 1 տերեւ	200
Պեռնարտ Խաչատուրեան՝ 1 տերեւ	200
Վարդգէս, Մակի Մահտեսեան եւ Վաչէ, Ժանին Իմաստունեան՝ 1 տերեւ	200
Ճօ եւ Փիեռ Սահակեաններ՝ 1 տերեւ	200
Մուրատեան Ընտանիք՝ 1 տերեւ	200
Գումար՝	$9.200

ՆԱՐԵԿ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍԸ

Նարեկ Վարժարաններու Ամավերջի Հանդէսը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 15 Յունիս 2016, կ.ե. ժամը 6:30-ին, Նիկոսիոյ վարժարանի ամփիթատրոնին մէջ, նախագահութեամբ Հայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի եւ հովանաւորութեամբ՝ Կիպրոսի Հայոց Կաթողիկոսական Փոխանորդ Տէր Նարեկ Արքեպիսկոպոսի, ներկայութեամբ Յունաստանի եւ Կիպրոսի մօտ ՀՀ Դեսպան Գագիկ Ղալաչեանի, Կիպրոսի Կրթական նախարարութեան ներկայացուցիչներու եւ այլ հրաւիրեալներու:

Տնօրէնուհի Տիկ. Վերա Թահմազեանի առաջնորդութեամբ շրջանաւարտներու հանդիսաւոր մուտքով սկսաւ օրուան յայտագիրը:

Հոգաբարձութեան Ատենապետ Պրն. Վարդան Թաշճեանի խօսքէն ետք, Տիկ. Վերա Թահմազեան ներկայացուց վարժարաններու ուսումնական եւ արտադասարանային հարուստ գործունէութեան տարեկան տեղեկագիրը, մանրամասնօրէն անդրադառնալով մարզական, դասախօսական, միջ-դպրոցական ձեռնարկներու, հանդիսութեանց, այցելութիւններու եւ ճամբորդութիւններու, մրցումներու եւ մրցանակներու, ընդհանուր պատկերը տալով վարժարաններուն ջամբած ուսման եւ ազգային-բարոյական-ընկերային կըրթութեան գծով իրագործուած ծրագիրներուն:

Ան իր շնորհակալական խօսքին մէջ յատկապէս անդրադարձաւ Կիպրոսի կառավարութեան նիւթաբարոյական ամբողջական աջակցութեան, ինչպէս եւ կրթական նախարարութեան սերտ գործակցութեան եւ զօրավիգին:

Վկայականներու բաշխումը կատարուեցաւ ձեռամբ՝ Պետ. Ներկ. Տիար Վարդգէս Մահտեսեանի եւ Տիկ. Վերա Թահմազեանի: Նիկոսիոյ Նախակըրթարանէն շրջանաւարտ եղան 12 աշակերտ-աշակերտուհիներ, Լառնագայէն՝ 2 հոգի, Լիմասոլէն՝ 3, իսկ միջնակարգէն մէկ հոգի՝ Անդրանիկ Խաչատուրեան:

Հրաժեշտի ուղերձներ կարդացին նախակրթարանի շրջանաւարտ Նաթալի Թերզեան եւ միջնակարգի միակ շրջանաւարտ Անդրանիկ Խաչատուրեան, որմէ ետք «Հուսկ Բանք»ով իր խօսքը շրջանաւարտներուն ուղղեց Տնօրէնուհին, իր վերջին յորդորը տալով անոնց:

Հանդիսութեան ընթացքին մէջընդմէջ ներկայացուեցաւ գեղարուեստական յայտագիր, արտասանութիւններով, հայկական պարով եւ երգչախմբային կատարումներով:

❏

«ԿԻՊՐԱՆ» ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ

ԹԵՀՐԱՆԻ (ՀՄԱԿ) ԵՒ ԿԻՊՐՈՍԻ 77-ՐԴ (ՀՄԸՄ) ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ԲԱՆԱԿՈՒՄ

Այս տարի եւս, տեղի ունեցաւ ՀՄԸՄ-ՀԵՄ-ի Սկաուտական բանակում, այն տարբերութեամբ, որ այս տարի ան կազմակերպուեցաւ Թեհրանի ՀՄԱԿ-ի (Հայկական Մարզամշակութային Արարատ Կազմակերպութիւն) սկաուտներուն հետ:

Յունիս 19-ին եւ 20-ին, Թեհրանէն Կիպրոս ժամանեցին 38 սկաուտներ, իրենց պատասխանատուներուն հետ, եւ թէեւ բոլոր կարգադրութիւնները եղած էին, որպէսզի ՀՄԸՄ-ՀԵՄ-ի եւ ՀՄԱԿ-ի սկաուտները միասնաբար մասնակցէին Փլաթանիայի Սկաուտական բանակավայրին մէջ մէկ շաբաթ երկարող բանակումի մը, այդ օրերուն, Թրոտոսի լեռնաշղթայի՝ Սոլէաս շրջանին մէջ յառաջացած հրդեհներուն պատճառով, անկարելի դարձաւ բանակումը կազմակերպել նախապէս ծրագրուած բանակավայրին մէջ:

Անմիջապէս խորհրդակցելով Կիպրոսի Սկաուտական Ֆետերասիոնին հետ, բանակումը կազմակերպող վարիչները նոր բանակավայր մը ապահովեցին Պրոտարաս ծովեզերեայ շրջանին մէջ, ուր տեղի ունեցաւ ծրագրուած բանակումը:

Բանակողները անմոռանալի օրեր անցուցին բանակումի տեւողութեան ընթացքին եւ վերադարձան Նիկոսիա, Կիրակի 26 Յունիսին, այցելելով Նիկոսիոյ Սուրբ Աստուածածին եկեղեցին, եւ ներկայ գտնուելով Ս. Պատարագին:

Կէսօրին, անոնք հիւրը եղան ՀՄԸՄ-ՀԵՄ-ի վարչութեան, որ ճաշկերոյթով պատուեց ՀՄԱԿ-ի սկաուտները: Ներկայ էր նաեւ կիպրահայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանը, որ ողջոյնի խօսք արտասանեց իրանահայ սկաուտներուն:

ՀՄԱԿ-ի սկաուտները Իրան վերադարձան 28 Յունիսին, իրենց հետ տանելով անմոռանալի յիշատակներ Կիպրոսէն: ❑

ՄԱՅԻՍ 28

Հայաստանի Ա. Հանրապետութեան 98-րդ տարեդարձի՝ Ուրբաթ, 27 Մայիսի հանդիսութեան մասնակցեցաւ նաեւ ՀՅԴ Կիպրոսի Պատանեկան Միութիւնը: ՀՄԸՄ-ի մարզադաշտին վրայ տեղի ունեցած հանդիսութեան, պատանիները հպարտօրէն տողանցեցին, բարձր բռնած Դաշնակցութեան կարմիր դրօշը:

Պատանեկանի էջը պատրաստեց Նանօր Ղազարեան

ՊՏՈՅՏ ԴԷՊԻ ԹՐՈՏՈՍ

Շաբաթ 19 Յունիսին, ՀՅԴ Պատանեկան Միութիւնը միօրեայ պտոյտ կազմակերպեց դէպի Թրոտոս, ուր պատանիները անմոռանալի օր մը անցուցին: Առաւօտուն, օթօպիւսը մեկնեցաւ ակումբէն եւ պատանիները խանդավառ մթնոլորտի մը մէջ ուղղուեցան դէպի Թրոտոսի լեռնաշղթային վրայ գտնուող զբօսավայրը ուր Պատանեկան Միութեան Վարիչ Մարմնի ընկերները պատրաստած էին հետաքրքրական խաղերով լեցուն յայտագիր մը, ինչպէս նաեւ համադամ խորոված: Պտոյտի մասնակիցները վերադարձան Նիկոսիա ուշ երեկոյեան, օթօպիւսին մէջ ստեղծելով ազգային յեղափոխական երգերու խանդավառ մթնոլորտ մը:

ԽԱՉԲԱՌ

ԹԻՒ 56

Պատրաստեց
Մարինէ Մանուշեան

ԼՈՒԾՈՒՄ ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 55-Ի

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ
1. Նազիկ Աւտալեան
2. Արեգակ - եան
3. Խաղաղ - ատոմ - մյ
4. Ղրկել
5. Գուշակ - ազոխ
6. Մի - սան - ոճ
7. Ծա - աստղ - օղ
8. Այ - աբեթ - վեհ
9. Ժուժկալ - ան - ակ
10. ԻՄ - ամ - հէք - վախ
11. Նսեմանալ
12. Տրոհ - ալ - ահա
13. Աման - վրէպ
14. Ժէ - նախ
15. Նուէր Սիմոնեան:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ
1. Նախագիծ - ժմիտ
2. Արա - ածու - ՌԱ
3. Ձեղուն - ծոմ
4. Ագի - այժմ - ահ
5. Կաղ - ամսական - ներ
6. Ակ - կիր - սա
7. Լքել - իժ
8. Տիտղոս - ՄԷ - վէմ
9. Որ - աբբահայր
10. Մկան - են
11. Եր - եզ - օթ - ՎԱ
12. Ալոճ - գալ - ան
13. Նն - ոխ - աւան
14. Ամ - ղեկ
15. Սեյրան Օհանեան:



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ
1. Կռիւ, մրցում - սիրտով գուշակել.
2. Ստացական դերանուն - ուրիշ - 5001՝ այբուբենի գիրերով (հակ.).
3. 7007՝ այբուբենի գիրերով - ուրախութենէ թրջկոտիլ - ծի.
4. Գլորիլ, սայթաքիլ - ձայնաշարի երրորդ ձայնանիշը - ինք - օրէնքի յանձնուած վէճ.
5. Անբարոյ, ստահակ - արեան շրջագայութեան խողովակ (հակ.).
6. Վրան երկաթ ծեծելու պողպատէ զանգուած - բոսոր, կարմիր - փաթեթ, կապոց.
7. Գահ, նստարան, պաշտօն - կարասի, տնային գոյքեր.
8. Սեպ, մխուող տարր - կայտառ, կտրիճ (հակ.) - առանձին.
9. Ծովային երկպատեան ճաշակելի կենդանի - մշակուած հողի բաժանում (հակ.) - առարկայ (հակ.).
10. Հացաբոյսերու ընտանիքին պատկանող արմըտիք - բադի նման ջրասէր հաւազգի - ականջի զարդարանք (հակ.) - կրկնուած գիրեր.
11. Աղբիւր (հակ.) - ալեւոր - հնձուած չոր խոտ (հակ.).
12. Գին - բուսնիլ - հողը հերկելու գործիք (հակ.).
13. 5400՝ այբուբենի գիրերով - պէս (հակ.) - ջուրի կամ որեւէ բանի կարօտ.
14. Կլայեկ, մետաղեայ ամաններու ծեփ (հակ.) - տրցակ - գիրի մը անունը (հակ.).
15. Սարսափ (հակ.) - յոգնած ուղեղի անհրական ներկայացում - 100 տարի:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ
1. Ամրոցի արտաքին պատ - գիրկ, ծոց - դահլիճ.
2. Անձնական դերանուն - 5300՝ այբուբենի գիրերով (հակ.) - իբր կատարեալ ընդունուած (հեղինակ).
3. 6-րդ ամիսը - կենդանի վարելու գաւազան.
4. Ծանր պատիժի արժանի - առարկայ (հակ.) - ինք.
6. Ուրախ - ցաւի ճիչ - ամբողջ.
7. Տարի - օդի, ջուրի բաղադրիչ կազ.
8. Դիտել - ջրել - 5060՝ այբուբենի գիրերով (հակ.).
9. Թուշ - ժողովրդական իմաստութեան ասոյթ - գայլի, շունի էգ (հակ.).
10. Խուլնալ - հանքային համեմ - մարմնի եղանակաւոր շարժում (հակ.).
11. Նաւեւ (հակ.) - նորածինի շարժուն մահիճ.
12. Գիրի մը անունը - պրկել - հայոց 6-րդ ամիսը (Յունուար).
13. Մատենադարան - շերտ, դասակարգ.
14. Լեռներու վրայ տափարակ տարածութիւն - երկու ձայնաւորներ.
15. Կանաթեղ - կթեղէն, կթելը - զաւակ ծնած կին:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Վարդուհի, Սոնիա Վայվայեաններ եւ ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, հեռաձայնով, դիմատետրով կամ փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ, մասնակից եղան իրենց մօր եւ մեծ մօր՝

Լուսին Վայվայեանի

մահուան սուգին, բաժնելով իրենց վիշտը:
Այս առթիւ "Արձագանգ"ին կը նուիրեն €50:

Բոլոր անոնք, որոնք իրենց ձեռնարկներուն մասին կ՛ուզեն նշում ըլլայ «Օրատետր»ին մէջ, թող բարի ըլլան կապուելու խմբագրութեան հետ
editor@artsakank.com.cy
+357 99633715

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱԳԱՆԳ-ԻՆ

ՀՕՄ-ի Կիպրոսի "Սօսէ" մասնաճիւղ €400

*Ողբ. **Գրիգոր Տիտոնեան**ի յիշատակին*
Համբարձում, Վարդուհի Դաւիթեան €100

*Ողբ. **Սմբատ Տէվլեթեան**ի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի*
Նուպար, Աստղիկ Դաւիթեան €20

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԿԻՊՐՈՍԻ "ՕՇԱԿԱՆ" ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ

*Ողբ. **Վռամ Նալպանտեան**ի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի*
Նարեկ, Մարինէ Դաւիթեան €20

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱՀԱՅԿ. ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ

*Ողբ. **Մարի Աւճեանեան**ի (Անգլիա) մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի*
Թագուհի Քոնտու €20
Մարի Պիպէրեան 20
Սեպուհ, Ալիս Դաւիթեան 20
Տէր եւ Տկն Անդրանիկ Նալչաճեան 15

*Ողբ. **Աննիկ Դուրեան**ի (ԱՄՆ) մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի*
Սեպուհ, Ալիս Դաւիթեան €100

ՕՐԱՑԵՏՐ

24 ՅՈՒԼԻՍ
"Խանասոր"ի լեռնագնացութիւն, Փլաթանիա
ՀՅԴ Կիպրոսի Կոմիտէ

14-21 ՕԳՈՍՏՈՍ
Պատանեկան Բանակում Թրոտոս
ՀՅԴ ԿԵՄ-ի Վարիչ Մարմին

21-28 ՕԳՈՍՏՈՍ
ՀՅԴ Երիտասարդական միջազգ. բանակում Փլաթրես

28 ՀՈԿՏԵՄԲԵՐ 19:30
Համերգ՝ Ալլա Լեւոնեանի
Ստրովոլոսի Քաղաքապետարանի սրահ
ՀՄԸՄ– ՀԵՄ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կը փափաքինք տեղեկացնել մեր հաւատացեալ ժողովուրդը՝ թէ Նիկոսիոյ Ս. Աստուածածին Մայր եկեղեցին, ներսէն եւ դուրսէն պիտի ենթարկուի հիմնական նորոգութեան 25 Յուլիսէն մինչեւ 3 Սեպտեմբեր 2016 երկարող ժամանակաշրջանին:

Ուստի Կիրակի 31 Յուլիս, 7, 21 եւ 28 Օգոստոսի պատարագները պիտի մատուցուին Ազգ. Առաջնորդարանի «Չ. Իւթիւճեան» սրահին մէջ, ժամը 9:45-ին:

Կիրակի 14 Օգոստոսին Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով Ս. Պատարագը եւ խաղողօրհնէքը տեղի պիտի ունենան Վիկտորիա Փողոցի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ժամը 10:00-ին:

ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԿԻՊՐՈՍԻ "ՕՇԱԿԱՆ" ՄԱՍՆԱՃԻՒՂ
Մ Ր Ց Ա Ն Ք

Համազգայինի Կիպրոսի "Օշական" Մասնաճիւղի վարչութիւնը կը յայտարարէ՝ "Սիփան" Պարախումբին համար տարբերանշանի (լոկօ) մրցանք մը: Ներկայացուած տարբերանշանները իրենց մէջ պէտք է ներառեն հայկական պարը խորհրդանշող գծագիր, Համազգայինի լոկոն եւ "ՍԻՓԱՆ" բառը:

Պատրաստուած տարբերանշանները պէտք է վարչութեան ներկայացուին մինչեւ 31 Օգոստոս 2016:



"The Armenian Genocide through the Cypriot press 1914-1923"
Get your copy for € 25.00 from:
Armenian MP Office Tel: 22 454540 Email: office@armenianmp.com
Armenian Prelature Tel: 22493560 Email: armprel@spidernet.com.cy

For More Information, contact :
Hagop Manougian: Tel: +357 99442886,
email: hagop@hotmail.com
Nareg Tavitian: Tel: +357 99488926,
email: nareg.tavitian@kpmg.com.cy
Harout Der Bedrossian: Tel:+357 99965256,
email: haroutdb@gmail.com

Խանասորի Արշաւանքի 119ամեակի դաշտահանդէս
Կիրակի 24 Յուլիս Բլադանիա – Թրոտոս
Կազմակերպութեամբ՝ ՀՅԴաշնակցութեան Կիպրոսի Կոմիտէի եւ գործակից միութիւններու

Օրուայ պատգամախօս՝ ընկ. Յարութ Տէր Պետրոսեան
Գեղարուեստական յայտագիր՝ ՀՅԴ Կիպրոսի Պատանեկան Միութեան կողմէ



ՀՄԸՄ-Ի 9-րդ
Միջ-Դիւանական Խորհրդաժողով

Նիկոսիա-Կիպրոս
27-29 Հոկտեմբեր 2016

ՊԱՏՐԱՍՏՈՒԵՑԷՔ

ԱԼԼԱ ԼԵՒՈՆԵԱՆ

ՈՒՐԲԱԹ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2016, ԺԱՄԸ 19:30
ՍՏՐՈՎՈԼՈՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՍՐԱՀ